2022, ՕԳՈՍՏՈՍ Բ, ԹԻՎ 16 (612)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Խոսք շնորհավորանքի

Վեհափա՛ռ Տեր, որդիական խոնարհությամբ ի սրտե շնորհավորում ենք Ձերդ Սրբությանը ծննդյան օրվա կապակցությամբ: Թող Աստված Իր ամենակարող Աջի զորությամբ անսասան պահի եւ պահպանի Հայաստանյայց Եկեղեցին եւ Ձերդ Սրբությանը պարգեւի հայրապետության արդյունաբեր տարիներ, կենաց արեւշատություն, որ արհավիրքների ու տարաբնույթ փորձությունների այս ալեծուփ եւ պտտորաջուր ծովում, որպես իմաստուն, հայրենանվեր ու եկեղեցաշեն առաջնորդ, մեր Եկեղեցու տապանը հասցնեք խաղաղ եւ ապահով կայանի: Անխոնջ մշակը միշտ չէ, որ ստանում է իր արժանի վարձքը... Վեհափա՛ռ Տեր, Ձեր հոգեւոր սպասավորության եւ անձնվիրումի հոգնատանջ տարիների վաստակը ամենատես Տերը թող հատուցի: Աղոթում ենք երկնային Հորը, որ Հայաստան եւ Արցախ աշխարհին փրկչական լույս եւ հոգենորոգ խաղաղություն պարգեւի, որպեսզի Ձերդ Սրբության քահանայապետության լուսեղեն ընթացքը այսուհետ եւս արդյունավորվի հայրենանվեր նորանոր ձեռնարկներով:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Օգոստոսի 23-ին **Սիրիայի եւ Լիբանանի աստվածաշնչային ընկերության նախագահին եւ Բեյրութի Սուրբ Հովսեփի անվան համալսարանի ռեկտորին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Սիրիայի եւ Լիբանանի աստվածաշնչային ընկերության նախագահ Ամին Խուրիին եւ Բեյրութի Սուրբ Հովսեփի անվան համալսարանի ռեկտոր հայր Սելիմ Դաքաշին: Նորին Սրբությունը, ողջունելով հյուրերի այցը հայոց հոգեւոր կենտրոն, գոհունակությամբ արձանագրեց, որ Կաթոլիկ եւ Հայ Եկեղեցիների միջեւ ձեւավորվել են ջերմ հարաբերություններ, փոխգործակցություն տարբեր ոլորտներում:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը խոսեց նաեւ արցախյան 44-օրյա պատերազմի հետեւանքով Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված տարածքներում հայկական հոգեւոր-մշակութային ժառանգության ոչնչացման եւ դրանց յուրացման քաղաքականության մասին:

Պարոն Ամին Խուրին իր երախտագիտությունը հայտնեց Հայոց Հայրապետին ընդունելության համար՝ ընդգծելով, որ եզակի հնարավորություն է ընձեռվել իրենց՝ հաղորդ լինելու քրիստոնեական հնագույն երկրներից մեկի սրբավայրերին ու հոգեւոր արժեքներին:

Օգոստոսի 30-ին **ՀՀ ԳԱԱ նախագահին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանին:

Վեհափառ Հայրապետը եւ տիար Աշոտ Սաղյանը գոհունակությամբ անդրադարձան Հայ Եկեղեցու եւ Գիտությունների ազգային ակադեմիայի միջեւ ձեւավորված գործակցությանը, ինչպես նաեւ ակադեմիայի նշանակալի դերակատարությանը Հայաստանում հիմնարար գիտությունների տարբեր ճյուղերի զարգացման գործում:

Ամենայն Հայոց Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ԳԱԱ նախագահին, անդամներին ու գիտության նվիրյալներին, որոնք շարունակում են ազգային գիտական այս հաստատության լավագույն ավանդույթները եւ իրենց գիտելիքներն ու փորձառությունը ծառայեցնում ի նպաստ հայրենիքի շենացման ու հզորացման:

Վեհափառ Հայրապետը եւ ԳԱԱ նախագահը կարեւորեցին առկա մարտահրավերների պայմաններում երիտասարդ սերնդի մեջ ազգային-հոգեւոր արժեհամակարգի ամրապնդումը, հայրենիքի հանդեպ պատասխանատվության բարձրացումը, նաեւ երիտասարդ գիտնականների ներուժի բացահայտումն ու գիտական գործունեության խթանումը:

Հայոց Եկեղեցին հոգեփրկչական իր ծառայությանը համընթաց շարունակելու է ազգապահպան առաքելությունը

Օգոստոսի 30-ին, 2022–2023 թթ. ուսումնական նոր տարեշրջանին ընդառաջ, Սուրբ Գայանե վանքում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ կրթության մշակների օրհնության կարգ: Կրթական ոլորտի երախտավորների օրհնության ավանդության սկիզբը դրվել է 2010 թվականին:

Արարողությանը ներկա էին ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանը, կրթական կառույցների ներկայացուցիչներ, բուհերի ռեկտորներ, մարզային կրթական վարչությունների ղեկավարներ, ՀՀ մի շարք դպրոցների տնօրեններ ու մանկավարժներ:

Օրհնության կարգի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց կրթության ոլորտի երախտավորներին՝ նշելով, որ այսօր նրանց համար հավատքի նորոգության, մեր սուրբ հայրերի հոգեմտավոր վեհ գործի հանդեպ հավատարմության վերահաստատման եւ ուխտի օր է:

«Աստվածահաճո եւ գովարժան է ձեր աշխատանքը, սիրելի՛ մանկավարժներ, կրթական գործի սիրելի՛ մշակներ, քանզի հակառակ ժամանակի բազում խոչընդոտներին եւ դժվարություններին՝ անմնացորդ սիրով եւ անօրինակ նվիրումով շարունակում եք մեսրոպաշունչ ձեր առաքելությունը՝ հավատալով գիտելիքի ուժին, աշխարհը վերափոխող ու գեղեցկացնող կրթալ, բանիմաց եւ առաքինի անհատների պատրաստության կարեւորությանը»,– ասաց Ամենայն Հայոց Հայրապետը՝ հորդորելով կրթության մշակներին ամենայն պատասխանատվությամբ եւ բարձր գիտակցությամբ շարունակել իրենց առաքելությունը, ներշնչող եւ խանդավառող օրինակ լինել սաների համար, հայորդիների մեջ սերմանել սեր միմյանց, բարու եւ արդարության հանդեպ, կրթել աստվածապաշտության եւ հայրենասիրության ոգով:

Նորին Սրբությունը հաստատեց, որ Հայոց Եկեղեցին հոգեփրկչական իր ծառայությանը համընթաց շարունակելու է ազգապահպան առաքելությունը հայ ժողովրդի կյանքում՝ Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքի բոլոր համայնքներում մշտապես զորավիգ լինելով նաեւ կրթօջախներին, մանկավարժներին, կրթական բարեփոխումներին, որոնք ուղղված կլինեն կրթելու եւ դաստիարակելու ազգային ինքնության բարձր գիտակցությամբ եւ բարոյական ամուր նկարագրով սերունդներ:

Ինքնության ու ազգային դիմագծի պահպանման գործում կարեւորելով ժամանակին համահունչ կրթությունն ու ազգային, հոգեւոր դաստիարակությունը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց. *«Այս հաստատ համոզումով է դարերի հոլովույթում Հայոց Եկեղեցին կյանքի կոչել կրթադաստիարակչական իր առաքելությունը՝ բյուրեղացնելով մեր ժողովրդի հոգին, որը մշտապես բաց է եղել աշխարհի առաջ, բայց միեւնույն ժամանակ կառչած իր հավատքին ու նախնյաց ավանդներին: Նույն առաքելությանն է կոչված նաեւ ժամանակի փորձությունները հաղթահարած «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան, որն անկախությունից հետո կրթական ասպարեզի ամենակարեւոր ձեռքբերումներից է՝ ազգօգուտ բարի պտուղը Եկեղեցի–պետություն գործակցության եւ հետեւողական բազմամյա աշխատանքի: Առարկայի միջոցով ջամբվող արժեքները բոլոր ժամանակներում եղել են մեր ժողովրդի գոյության եւ հարատեւության հենայունը, երբեմն անհերեւույթ, սակայն մշտապես ամուր եւ անխորտակելի պատվարը ազգային ինքնագիտակցության: Այս առարկայի ամբողջական դասավանդումը հանրակրթական դպրոցներում, ազգային կրթության պարտադիր տարրի պատշաճ ապահովումը բարձրագույն կրթության մեջ պետք է դառնան ամենքիս եւ հատկապես՝ հայրենի պետության հոգածության առարկան, եթե կամենում ենք ունենալ իրական արժեքներով սնուցվող անկախ պետականություն, կառուցել մեր նախնիների երազած շեն ու հզոր հայրենին, որի զավակները հասակ կառնեն հոգեմտավոր մեր ժառանգության համակարգային իմացությամբ եւ ճանաչողությամբ: Միմիայն այս ճանապարհով կկարողանանք պահպանել ազգային մեր դիմագիծը եւ երաշխավորել ազգիս երթը դեպի նոր հազարամյակներ»:*

Վերջում Նորին Սրբությունը, կրթության մշակներին մաղթելով բարի, խաղաղ եւ պտղաբեր ուսումնական նոր տարի, հայցեց Երկնավորից, որ այն դառնա հաջողությունների եւ նորանոր ձեռքբերումների ժամանակաշրջան, որպեսզի Տիրոջով զորացած՝ անսպառ եռանդով, նվիրումով եւ պատասխանատվությամբ շարունակեն լուսավորել, կրթել եւ դաստիարակել մեր ժողովրդի զավակներին:

Արարողության ավարտից հետո, ի պատիվ հրավիրյալների, տեղի ունեցավ ընդունելություն:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մասնակցեց ԵՀԽ 11-րդ համագումարին

Օգոստոսի 31-ից սեպտեմբերի 8-ը Գերմանիայի Դաշնության Կառլսռուե քաղաքում տեղի ունեցավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 11-րդ գագաթնաժողովը՝ «Քրիստոսի սերն է առաջնորդում աշխարհը» խորագրով:

Յոթ տարին մեկ անգամ գումարվող գագաթնաժողովը համավարակի սահմանափակումներից հետո միատեղել է աշխարհի տարբեր ծագերից քրիստոնեական ավելի քան 300 Եկեղեցու ներկայացուցիչների:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ու տնօրինությամբ գագաթնաժողովին իր մասնակցությունը բերեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական պատվիրակությունը՝ հետեւյալ կազմով՝ Տ. Վիգեն արք. Այքազյան (ԱՄՆ հայոց արեւելյան թեմ), Տ. Արմաշ եպս. Նալբանդյան (Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ), Տ. Հովակիմ եպս. Մանուկյան (Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի հայոց թեմի առաջնորդ), Տ. Գեւորգ եպս. Սարոյան (Մասյացոտնի թեմի առաջնորդ), Տ. Սերովբե եպս. Իսախանյան (Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ), Տ. Գարեգին վրդ. Համբարձումյան (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական կենտրոնի տնօրեն), Սահակ սրկ. Սուքիասյան (Ֆրանսիայի հայոց թեմ), Արփի Քուզույան (ԱՄՆ հայոց արեւելյան թեմ), Դիաննա Ծաղիկյան (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին), Էրիկա Արաեւնա (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմ), Մանյա Քեշիշյան (Կանադայի հայոց թեմ):

Մայր Աթոռի պատվիրակները նաեւ իրենց գործուն մասնակցությունը բերեցին ԵՀԽ անցնող աշխատանքների ամփոփմանն ու նոր ծրագրերի պատրաստմանը:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Հայ դպրության հիմնադիրը

Ս. Մեսրոպ Մաշտոցը ծնվել եւ ապրել է ազատ շինական երանելի Վարդանի ընտանիքում: Նրա աշակերտ եւ վարքագիր Կորյունի վկայությամբ՝ Մաշտոցը 389–390 թթ. հեռանում է մայրաքաղաքից եւ դառնում կրոնավոր. «....մերկանայր այնուհետեւ զիշխանակիր ցանկութիւնս, եւ առեալ զխաչն պարծանաց՝ ելանէր զկնի ամենակեցոյց խաչելոյն»: Սակայն պետք է արձանագրել, որ Մաշտոցը մյուս կրոնավորների նման չի մեկուսանում աշխարհից, ապրում միայնակեցական պայմաններում, այլ անձնուրացաբար նվիրվում է իր ազգին ու Եկեղեցուն ծառայելուն, կառուցում է հայ դպրության հիմնասյուները, ծավալում կրթական նշանակալի գործունեություն եւ նույնիսկ ճգնության ժամանակ մեկընդմեջ ճգնարանից իջնում, մասնակցում է աշխարհիկ կյանքում ընթացող ձեռնարկներին: Մաշտոցը լավ էր ճանաչում իր ժողովրդին, կարողանում էր ներգործել նրա վրա, ուստի նրան են հանձնարարում Գողթն գավառում քրիստոնեություն քարոզելը, որովհետեւ գողթնեցիք, ինչպես վկայում է պատմիչը, միայն լսել էին քրիստոնեության մասին, սակայն չէին դարձել քրիստոնյա: Մաշտոցին Գողթն գավառում դիմավորում են սիրով եւ մեծ շքախմբով (տես *Ս. Ղազարյան,* Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երեւան, 1981, էջ 66):

Հայ դպրության ռահվիրա Ս. Մեսրոպը, սակայն, անմահացավ հայոց այբուբենի ստեղծմամբ (404–405 թթ.): Նոր նշանագրերը սքանչելի էին, ինչպես նկարագրում է նրա աշակերտ Կորյունը: Համաձայն մասնագետների ուսումնասիրությունների՝ հայկական այբուբենը գրի բարձրագույն աստիճանն էր ներկայացնում: Մաշտոցը հնչյունի համար նշան էր ստեղծել, տառերն անվանակոչել եւ դասավորել յուրահատուկ հերթականությամբ: Հայկական գիրն ունի որոշակի առանձնահատկություններ. այն գրության ձեւով ձախից աջ է, հիմնված է «մի հնչույթ – մի տառ» սկզբունքի վրա: Պատմական դժվարին ժամանակներում ստեղծված հայոց այբուբենը դարձավ հայապահպանության կռվանը, ազգի վերամիավորման մշակութային ազդարարը, պահլավական հոգեւոր-մշակութային արշավանքների դեմ հզոր ընդդիմակայության ձեւ (տես *P. Peeters,* Pour l'histoire des origines de l'alphabet arménien, REA (Revue des Etudes arméniennes), 1929, t. 9, էջ 225):

Մեսրոպատառ հայ գիրը դարձավ այն լուսավոր ոսկե դարպասը, որով հայ ժողովուրդը հաղորդակցվեց համաշխարհային քաղաքակրթության նվաճումներին, ճանաչեց իր անցյալը, դարերի միջով տարավ իր ավանդույթները եւ գոյատեւեց: ➥ *էջ 5, 8*

Սուրբ Մարիամ Աստվածածնի վերափոխումը

Սկիզբը՝ թիվ 15

Տոնակատարությունը

Սուրբ Աստվածամոր վերափոխման տոնին մատուցվում է սուրբ եւ անմահ պատարագ: Տոնի հաջորդ օրը Մեռելոց է՝ ննջեցյալների հիշատակության օր: Տոնական այս օրը Երեքսրբյանը, օրվա խորհրդին համահունչ, փոխվում է այսպես. «Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ եկիր ի փոխումն մօր Քո եւ Կուսի, ողորմեա՛ մեզ»:

Հավարտ սուրբ պատարագի՝ կատարվում է խաղողօրհնեք, որի ժամանակ ընթերցվում է Ս. Ներսես Դ Շնորհալի հայրապետի (1166–1173 թթ.) «Տէր Աստուած Հայր անսկիզբն» աղոթքը:

Օրհնված ողկույզները բաժանվում են ժողովրդին: Հոգեւորականն աղոթքով խնդրում է Տիրոջը. «....ընծայաբերված այս պտղին խառնելով միացրու Քո աստվածային եւ հոգեւոր օրհնությունը, որպեսզի, այս նյութական պտուղների ճաշակմանը համաժամանակ, Քո օրհնության իմանալի շնորհը սրա միջոցով միախառնվի ճաշակողների հոգիներին: Եվ որպեսզի մաքրություն եւ մեղքերի թողություն ստանան այս ճաշակմամբ» (ամբողջական աղոթքն աշխարհաբար տես «Էջմիածին», 1998, Ը–Թ, էջ 179–181):

Ներսես արք. Պողարյանը գրում է. «....ըստ Տօնացոյցի՝ պիտի կատարուի խաղողի օրհնութիւն: Բայց ստիպողական չէ անպայման այդ օրը կատարել սոյն օրհնութիւնը»: Նա մեջբերում է 1266 թ. ընդօրինակված ձեռագիր Մաշտոցը, որում առկա է հետեւյալ հիշատակությունը քննարկվող հարցի վերաբերյալ. «....կանոն օրհնութեան խաղողոյ, զոր ասացեալ է Տեառն Ներսէսի Կաթողիկոսի Հայոց, յաւուր տաւնի Աստուածամաւրն եւ կամ Սրբոյ Խաչին ըստ իւրաքանչիւր տեղւոյ բնութեան ջերմութեան եւ կամ ցրտութեան ի հասումն պտղոյն»: Ուշագրավ է նաեւ սույն վկայությունը. «Վենետիկի թիւ ԻԴ Մաշտոցին մէջ՝ օրհնակուած Սաղմոսավանք 1436 թուին. խաղողոյ աւրհնութիւնը դրուած է *Սուրբ Խաչին*» (*Նորայր արք. Պողարեան,* Ծիսագիտութիւն, էջ 72):



Ինչո՞ւ խաղողի օրհնություն

Բերքի՝ Տիրոջն ընծայելու մասին Աստվածաշնչում կարդում ենք. «Պատվի՛ր Տիրոջը քո արդար վաստակից եւ քո արդար բերքից պտո՛ւղ հատկացրու Նրան....» (Առակ. Գ 9): Սուրբգրային մեկ այլ հիշատակության համաձայն՝ «....կվերցնես քո Տեր Աստծու քեզ տված երկրի պտուղների առաջին բերքը, կլցնես զամբյուղի մեջ եւ կգնաս այնտեղ, ուր կընտրի Տեր Աստվածը.... Արդ, ահա բերել եմ Տիրոջ ինձ տված երկրի բերքի երախայրիքը....» (Բ Օր. ԻԶ 2, 10):

Աստվածաշնչի վկայության համաձայն՝ ջրհեղեղից հետո Արարատ լեռան ստորոտին «Նոյը՝ հողագործ այդ մարդը, առաջինն էր, որ հող մշակեց եւ այգի տնկեց: Նա խմեց դրա գինուց....» (Ծննդ. Թ 20–21): Նոր Կտակարանում Քրիստոս ասում է. «Ես եմ ճշմարիտ որթատունկը, եւ իմ Հայրը մշակն է: Ամեն ճյուղ, որ իմ վրա է եւ պտուղ չի տալիս, Նա կտրում է այն. եւ այն ամենը, որ պտուղ է տալիս, էտում է, որպեսզի առավել եւս պտղաբեր լինի: Դուք արդեն իսկ մաքուր եք այն խոսքի համար, որ ձեզ ասացի: Մնացեք իմ մեջ, եւ ես՝ ձեր մեջ. ինչպես ճյուղը, որ ինքն իրեն չի կարող պտուղ տալ, եթե որթատունկի վրա հաստատված չլինի, նույնպես եւ դուք՝ եթե իմ վրա հաստատված չլինեք: Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը» (Հովհ. ԺԵ 1–5):

Խաղողից է նաեւ գինին. Քրիստոս վերջին ընթրիքի ժամանակ, «բաժակ վերցնելով՝ գոհություն հայտնեց, տվեց նրանց ու ասաց. «Խմեցեք դրանից բոլորդ, որովհետեւ այդ է նոր ուխտի իմ արյունը, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար» (Մատթ. ԻԶ 27–28):

Խաղողօրհնության աղոթքի մեջ Ս. Ներսես Շնորհալի հայրապետն ասում է. «Ողկուզավոր բոլոր պտուղներից խաղողի հյութն առավել արժանի դարձավ օրհնության մեծագույն շնորհին՝ լինելով Միածին Որդուդ փրկագործ արյան նյութը, որով գնվելով՝ ազատվեցինք մեղքի ու մահվան ծառայությունից»:

Առաջին հրաշքը, որ Քրիստոս կատարեց Կանայի հարսանիքի ժամանակ՝ Սուրբ Աստվածամոր բարեխոսությամբ, եւս կապված է գինու հետ. «Գալիլիա հասնելու երրորդ օրը Կանա քաղաքում հարսանիք կար: Եվ Հիսուսի մայրն այնտեղ էր: Հարսանիքի հրավիրվեցին նաեւ Հիսուս եւ Իր աշակերտները: Եվ երբ գինին պակասեց, մայրը Հիսուսին ասաց. «Գինի չունեն»: Եվ Հիսուս նրան ասաց. «Ի՞նչ ես ուզում ինձնից, ո՛վ կին, իմ ժամանակը դեռ չի հասել»: Նրա մայրը սպասավորներին ասաց. «Ինչ որ ձեզ ասի, արեք.... Հիսուս այս առաջին նշանն արեց Գալիլիայի Կանա քաղաքում՝ որպես սկիզբը նշանների, եւ հայտնեց Իր փառքը, ու Նրա աշակերտները հավատացին Նրան» (Հովհ. Բ 1–4, 11):

Նաեւ ասվում է. «....օրհնի՛ր նաեւ այժմ Քեզ նվիրված նորոգված տարվա երախայրիքի այս պտուղը՝ խաղողի ողկույզները, ըստ Ահարոնի հին քահանայության, ինչպես որ օրհնադրեցիր Իսրայելի տոհմի համար Մովսեսի ձեռքով՝ բոլոր պտուղների անդրանիկն ընծայաբերել Քո վկայության խորանին: Եվ սա հաստատվեց, որպեսզի մասնավոր ընծաների միջոցով Քո օրհնությունը տարածվի բոլոր պտուղների վրա», այսինքն՝ ամեն տարի խաղողը, իբրեւ մեր այգիների երախայրիք, նվիրում ենք Աստծուն, ինչպես ընդունված էր, որպեսզի այդ մասնավոր ընծայով բոլոր պտուղներն օրհնվեն: Խաղողի օրհնությամբ Հայոց եկեղեցին խորհրդանշական իմաստով օրհնում է բոլոր այգեստանները:

Տոնի ժողովրդական սովորույթները

Ազգագրագետ Սամվել Մկրտչյանը գրում է, որ առանձին բնակավայրերում Վերափոխման տոնն ուներ նաեւ անվանման այլ տարբերակներ, ինչպես նաեւ ժամանակային մասնակի տարբերություններ: Տաղավար այս տոնը ժողովրդական կենցաղում հայտնի էր նաեւ «Աստվածածնի Զատիկ», «Խաղողի Զատիկ», «Աստվարածին» եւ այլ անվանումներով:

Ս. Մկրտչյանը պահպանված ժողովրդական ավանդազրույցներից հիշատակում է հետեւյալը. «....երբ Նոյն աղավնուն ուղարկում է տեղեկություն բերելու, աղավնին հանդիպում է Քրիստոսին: Քրիստոս մի ճութ խաղող է տալիս աղավնուն, օրհնում այն, հետո մի բաժակ գինի է վերցնում, խփում խաղողի ողկույզին եւ ասում. «Տար, տուր Նոյին.... գինին իմ արյունն է, խաղողը՝ իմ մարմինը, թող հավատա ու վախի ոչ մի նշույլ չունենա, թող հավատա ու տապանից դուրս գա ու իջնի երկիր»:

Մինչեւ Վերափոխման տոնը մարդիկ խաղողից չէին ճաշակում: Իսկ տոնին այգետերերը ամենաընտիր խաղողը՝ թաշկինակների մեջ պահած, տանում էին մոտակա եկեղեցիները, վանքերը՝ օրհնելու:

Ուշագրավ է, որ անցյալում խաղողօրհնեքը հիմնականում տեղի էր ունենում այգիներում, երբ քահանան՝ մի ձեռքին մկրատը, իսկ մյուսով խաչը բռնած, գնում էր այգիները եւ հենց այնտեղ կատարում խաղողի օրհնությունը (*Ս. Մկրտչյան,* Տոներ, Երեւան, 2010, էջ 106–109):

Խաղողից բաժին էին հանում նաեւ թռչուններին՝ օրհնված ողկույզներից կախելով աղբյուրների կամ խաչքարերի վրա:

Ամեն բնակավայր ուներ Տիրամորը նվիրված ուխտագնացության իր սրբատեղին: Սուրբ Աստվածամորը դիմում էին զանազան խնդրանքներով:

Ուխտագնացություններից անբաժան էր մատաղի արարողությունը:

Աստղիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Զմրուխտ վազերի սգերգը

Սկիզբը՝ թիվ 14–15

Դատապարտյալ Գեղամի երկու տասնյակ տարիներն անցան անասելի տաժանակրության, փորձությունների ու փորձանքների միջով. ծայրեծայր դեգերեց խորհրդային բանտային գեհենի քառուղիներում: Ինչպիսի՜ արհավիրքներ տեսավ, տառապալից ու նյարդային ի՜նչ օրեր քաշեց մարդկանց միայն բերք ու բարիք պարգեւող երբեմնի տոհմիկ այգեգործը: Փշալարերի եւ սպիտակ արջերի աշխարհում նա թաղեց իր ծաղիկ երիտասարդությունը, խարտյաշ, ոսկեգանգուր մազերը գույն առան սիբիրյան ձնից...

Այս անօրեն, անհնչյալ երկրամասում, ուր կատաղորեն մարտնչում էին հույսն ու վհատությունը, կալանավորի՝ նրա գետնաքարշ գոյության միակ ապավեն լույս-փարոսը հույսն էր, Նորին Մեծություն Հույսը, որ չէր լքում նրան, չէր թողնում հոգով կոտրվի, հիվանդանա, կորցնի հավատը, կյանքի կորովը, ոգին...

....Աշխարհացունց պատերազմ եղավ հողագնդում, սակայն այդ մասին եւ ոչ մի պաշտոնական տեղեկատվություն. բռնավորներին ո՞վ էր մարդատեղ դնում, եւ բացի այդ՝ իշխանությունները զգուշանում էին հնարավոր խռովությունից... Գեղամը միայն կիսաշշուկով շրջանառվող լուրերից իմացավ, որ պատերազմը ֆաշիզմի դեմ ավարտվել է ԽՍՀՄ-ի ու նրա դաշնակիցների հաղթանակով, եւ բարեբախտաբար թշնամական որեւէ ռումբ չի պայթել Հայաստանում: «Ուրեմն թող խաղաղ ապրի իմ հայ ժողովուրդը, նրա հետ նաեւ ընտանիքս...»,– հեռավոր այս ափերում լուռ գոհունակությամբ մտորում էր նա:

* * *

Պատժաժամկետին արդեն երեք տարի էր մնում, երբ... վախճանին հասավ ԳՈՒԼԱԳ-ի գլխավոր ճարտարապետ Իոսիֆ Ստալինը: Քաղաքական շարժառիթներով դատապարտվածների ու աքսորվածների համար բեկումնային, հուսադրող օրեր եկան: Զրպարտանքով, սուտ մատնությամբ Սիբիրում հայտնված աքսորյալներին ու դատապարտյալներին (եթե, իհարկե, ողջ էին մնացել...) արդարացնում եւ տուն էին վերադարձնում, սակայն քրեականների համար պատժաժամկետն անփոփոխ օրացուցայինը թողեցին...

Գեղամի կյանքում էլ բարեշրջում եղավ. կարծես Աստված սկսեց սիրել նրան...

Վերահսկիչները նկատել էին նրա չափավոր, օրինակելի պահվածքը, աշխատանքային եռանդը, ուստի հենց նրան երաշխավորեցին աշխատելու հիմնարկության պահեստում՝ որպես ապրանքներ բեռնող ու բեռնաթափող բանվոր: Դա նրա սիբիրյան դժնդակ կյանքում առողջարանի պես մի բան եղավ, ուղղակի բարեբախտություն...

Այստեղ սառնամանիք չէր, իսկ թիկունքում էլ չկար ահարկու, ամեն րոպե խոցելու պատրաստ զինյալի սվինը...

Գործիմաց, թեթեւտն, ժրաժիր ու խելահաս Գեղամը պարզապես գյուտ էր պահեստապետների, գնորդների ու հաշվառիչների համար: Շուտով նա այնքան մեծ համակրանքի ու վստահության արժանացավ, որ պատիվ արեցին կալանավորին... ճաշի նստել իրենց հետ: Գեղամի խնդրանքով եւ վերջիններիս բարեխոսությամբ՝ հիմնարկի ռեժիմային ծառայության պետը նրան արտոնեց գիշերել պահեստում (եւ ոչ այլեւս այն գաղջ, մահահոտ, մարդկային փարախ բարաքներում...): Մաթեմատիկական փայլուն հիշողության շնորհիվ նա անսխալ, մեկ առ մեկ գիտեր պահեստ ներմուծվող ու ելքագրվող խառն ապրանքների քանակը, չափն ու կշիռը, դրանով իսկ մեծապես օգնում էր իր ղեկավարներին՝ ճշգրտորեն լրացնելու ծեւաթերթիկներն ու հաշվեմատյանները: ➥ *էջ 6*

ՊԵՏՐՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՅՈՒՆԵՅԻ

Գովեստ Սուրբ Աստվածածնի եւ միշտ Կույս Մարիամի

Սկիզբը՝ թիվ 15

Արդ, ի՞նչ օրինակներով քեզ ներկայացնենք ու գովենք, սո՛ւրբ Աստվածածի՛ն, որովհետեւ ահա եղար Դրախտ աստվածատունկ, Այգի վայելուչ, Մորենի անկիզելի, Լեռ սուրբ, Ժայռ ջրաբուխ, Գավազան ծաղկյալ, Սափոր ոսկյա, Տուփ անուշահոտ խունկերի, Տապանակ կենդանագիր ուխտի, Ջրհոր կենդանի ջրի, Բույս բարի, Վայր շափյուղայի, Քաղաք Աստծու, Պարտեզ փակված, Աղբյուր կնքված, Բլուր կնդրուկի, Հովիտ շուշանի, Հող անջրդի, Ամպ թեթեւ, Անապատ անկոխ, Դուռ կողպված, Տոմար անընթեռնելի, Երկիր բանավոր, Առավոտ խաղաղության:

Այս բոլոր կոչումները մարգարեները շնորհեցին կանխավ: Իսկ մենք սկսենք բացատրել սրբերի կողմից քեզ տրված այս քսանչորս վկայությունները:

ա. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Դրախտ աստվածատունկ, որովհետեւ աստվածաբույս մարմինը՝ որպես կյանքի ծառ, քո մեջ արմատացավ, ու Բարձրյալի զորությունը քեզ անհպելի տաղավարի վերածեց բոցեղեն սրի կողքին:

բ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Այգի՛ վայելուչ, որում ճշմարիտ որթը տնկվեց Հոր կամքով: «Իր էշը որթին պիտի կապի,– գրված է,– եւ իր ավանակը՝ որթի ոստին» (հմմտ. Ծննդ. ԽԹ 11): Այստեղ Բանն Աստված «որթ» է կոչվում, իսկ Նրա մարմինը՝ «ոստ»: Եվ Միածինն Ինքն էլ ասում էր. «Ես եմ ճշմարիտ որթը» (Հովհ. ԺԵ 1):

գ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Մորենի՛ սխրալի, որ աստվածության հրով վառվեցիր, բայց անկեզ մնացիր:

դ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Լե՛ռ սուրբ, որտեղ Ստեղծիչը՝ առագաստով վարագուրված, նորահրաշ տնօրինությամբ երեւաց Մովսեսին:

ե. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Վե՛մ ապառաժ, որից հորդահոս վտակը հոսելով՝ համայն աշխարհի ավետիսն է հնչեցնում. «Եթե մեկը ծարավ է, թող գա ինձ մոտ ու խմի» (Հովհ. Է 37):

զ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Գավազա՛ն ծաղկյալ, որի վրա Հեսսեի արմատից բուսնեց մշտադալար ծաղիկը, որի նախօրինակն էր Ահարոն քահանայապետի ցուպը, որն էլ վկայության խորանի մեջ բողբոջելով՝ ճյուղ արձակեց:

է. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Սափո՛ր ոսկյա, որ ոչ թե մահկանացու ուտելիքը կրեցիր, այլ անմահացնող կերակուրը, որի համար աստվածային բերանն ինքն ասաց. «Ձեր հայրերը անապատում մանանան կերան եւ մեռան, բայց ով որ իմ մարմինը ճաշակի, հավիտյան մահ չպիտի տեսնի» (հմմտ. Հովհ Ը 51–52):

ը. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Տո՛ւփ խնկաբույր յուղով լցված, որից մեծագին նարդոսը բուրեց եւ աստվածային անուշահոտությամբ լցրեց տիեզերական տունը:

թ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Տապանա՛կ շարժուն, որի մեջ կենդանագրվեց մշտնջենավոր Բանը եւ նորոգեց փշրված մովսիսակերտ քարեղեն տախտակները՝ նրանց փոխարեն աստվածային օրենքները չորս բանավոր տախտակների վրա դրոշմելով:

ժ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Տո՛ւն կենդանի ջրի, որի մասին մարգարեն ասում էր. «Տիրոջ տնից աղբյուր պիտի ելնի եւ հեթանոսների բաժինը ոռոգի» (հմմտ. Հովել Գ 19), ինչպես Միածինն Ինքը եւս ասաց. «Ես եմ կենդանի ջուրը» (Հովհ. Դ 10–11):

ժա. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Բո՛ւյս բարի՝ ըստ իր մահճի մեջ կենարար Քրիստոսին ակնարկած Հակոբի, թե՝ «Շառավղից ելար, որդյա՛կ» (Ծննդ. ԽԹ 9):

ժբ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Քաղա՛ք Աստծու՝ ըստ երանելի Դավթի, որ դեռ շատ առաջ երգեց. «Տերը փառավոր բաներ խոսեց քո մասին, Աստծո՛ւ քաղաք» (Սաղմ. ՁՁ 3):

ժգ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Բնակարա՛ն շափյուղայի, որովհետեւ աստվածախառն մարմինը քո մեջ գոյացավ իբրեւ պատվական ակն, որը՝ որպես ընտիր քար, դրվեց Սիոնի հիմքում:

ժդ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, ըստ ամենիմաստուն Սողոմոնի՝ Աղբյո՛ւր կնքյալ (հմմտ. Երգ երգոց Դ 12), որից, առանց կուսության կնիքը լուծելու, բխեց ամենալից գետը:

ժե. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Պարտե՛զ փակված, որ բազմաբերք ձիթենին վերընձյուղեցիր, որի մասին Եսային մարգարեացավ, թե՝ «Գալիք օրերին Հակոբը նոր տունկեր պիտի բուսեցնի, Իսրայելը պիտի ծաղկի եւ ընձյուղվի, ու ամբողջ աշխարհը նրա պտղով պիտի լցվի» (Ես. ԻԷ 6):

ժզ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Հովի՛տ անվար, որից տերունական մարմինը բուսնեց իբրեւ վայրի շուշան, եւ որի մասին ճառեց հոգելից մարգարե Ովսեն՝ ասելով. «Իսրայելի համար ցող պիտի լինեմ, եւ այն շուշանի պես պիտի ծաղկի» (Ովսե ԺԴ 6):

ժէ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Բլո՛ւր խնկի, ուր Տերը մտնելով՝ մահկանացու նյութն անմահության բույրով համեմեց ու կենդանիների եւ մեռյալների այս աշխարհում ծնվելով՝ հավիտենական կյանքի խունկը ծխեց, ինչպես որ մարգարեությունն էր կանխասում. «Այն կնդրուկի պես պիտի բուրի» (Ովսե ԺԴ 7):

ժը. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Հո՛ղ անջրդի, որի չոր բնությունը որեւէ արվական բնություն չհամարձակվեց խոնավեցնելով աղարտել: Այդ իսկ պատճառով մարգարեն Քրիստոսին նրա վրա ծլարձակած նկարագրեց, ինչպես ապառաժի վրա ծլած մի բույս՝ ասելով. «Նա մեր առջեւ բացվեց մատղաշ տունկի նման, անջրդի հողում բուսնած արմատի պես» (Ես. ԾԳ 2):

ժթ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Ա՛մպ թեթեւ՝ ըստ Եսայի մարգարեի կանխասացության. «Ահավասիկ Տերը, թեթեւ ամպի վրա նստած, եգիպտոս պիտի գա» (Ես. ԺԹ 1): Արդարեւ, ցամաք ամպ ես դու, քանի որ աշխարհային ցանկություններով չխոնավացար ու չծանրացար:

ի. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Անապա՛տ անկոխ, որում ո՛չ թե մի պարզ մարգարե կանգնեցրեց վկայության խորանը, այլ Աստվածորդին Ինքը՝ մեծ, կատարյալ եւ անձեռագործ խորանը, այսինքն՝ տիրական Իր մարմինը, որն առանց արվական սերմի ստեղծեց եւ որը, լուսազգեստ արգանդում սաղմնավորելով, կանգնեցրեց, ինչպես հոգեհնչող քնարը՝ [Դավիթն] է ասում. «Արեւի մեջ կանգնեցրեց իր խորանը» (Սաղմ. ԺԸ 6):

իա. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Դո՛ւռ կողպված, որից միայն հրեշտակների Տերը մտավ ու ելավ եւ կուսական արգանդը չլուծեց, ինչի մասին մարգարեացավ Եզեկիելը. «Արեւելյան կողմի դուռը փակ պիտի մնա, պիտի չբացվի ու այնտեղից որեւէ մեկը չպիտի մտնի կամ դուրս գա, որովհետեւ այնտեղով Իսրայելի Տեր Աստվածը պիտի մտնի ու ելնի, բայց դուռը փակված պիտի մնա» (Եզեկ. ԽԴ 1–2):

իբ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Տո՛մար անընթեռնելի, որովհետեւ թեպետ Հովսեփը կարդալ գիտեր, քանզի այլ կին ուներ եւ անփույթ էլ չէր մարմնական միավորության գործում, սակայն չհամարձակվեց քեզ ընթերցել, ինչպես որ մարգարեն ասաց. «Թուղթը պիտի տրվի մի մարդու, որը կարդալ գիտի, սակայն չպիտի կարողանա այն կարդալ» (հմմտ. Ես. ԻԹ 12):

իգ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Երկի՛ր բանավոր, որովհետեւ աստվածընկալ քո որովայնը ո՛չ միայն աթոռ, այլեւ ճշմարտապես մայրը եղավ անմատույց լույսի, ուստի եւ շնորհալից վարդապետներից մեկը գրեց, թե՝ «....որպես Աստված եւ ճարտարապետ, երկիրը վերստեղծելով, երկնքի վերածեց»:

իդ. Ուրախացի՛ր, Մարիա՛մ, Առավո՛տ գեղեցիկ, որով ծագած մեր խաղաղությունը զարմանալի հորինմամբ երկուսը մեկ դարձրեց եւ ըստ սուրբ Զաքարիայի՝ «արեգակնաբար ծագեց մեզ վրա՝ մեղքերի խավարը փարատելու համար» (Ես. ԻԹ 12):

Արդ, ուրիշ ի՞նչ նման օրինակ կարող ենք ընծայել սուրբ Աստվածածնի՛դ: Չէ՞ որ ահա գերազանց ես խոսքերից, գերիվեր ես բոլոր էակներից եւ բարձր ես մարդկային մտքից, որովհետեւ Սուրբ Հոգին իջավ քեզ վրա, եւ Բարձրյալի զորությամբ տաղավարացար: Քանի որ Աստծուն ընդունեցիր, Աստծուն հղացար, Աստծուն երկնեցիր, Աստծուն ծնեցիր: Քանի որ անպարագրելի Աստծուն գրկիդ մեջ կրեցիր, կաթով սնեցիր ու կերակրեցիր, Աստծուն գգվեցիր եւ որպես մանկա՛ խանձարուրով պատեցիր Նրան, Ում համար երկինքը աթոռ է եւ երկիրը՝ ոտքերի պատվանդան, եւ Ում իսկությունը երկինքներն իսկ չեն կարող պարփակել:

Սակայն ի՞նչ կարիք կա այսպես ինքս ինձ չարչարելու, կամ ինչո՞ւ ինձ շփոթեցնեն երանության արտահայտությունները, քանի որ ահա երկինքը, որ Սինա լեռան վրա բոցավառ կրակով դղրդալով՝ սանդարամետի հիմքերը սասանեց, եւ ձեռքերը, որոնք երկինքն ու երկիրը ստեղծեցին, այժմ իբրեւ մատների մեջ բաժակ բռնած պարմանի՝ մատուցում են այն մի աղջկա:

Արդ, գովության այս խոսքերը ոչ այլ ինչ են, քան քո իսկ մարգարեությունը, թե՝ «....այսուհետեւ բոլոր ազգերը երանի պիտի տան ինձ» (Ղուկ. Ա 48): Արդ, աղաչում ենք քեզ, սո՛ւրբ Աստվածածի՛ն, բարեխո՛ս եղիր քո Որդու եւ մեր Աստծու մոտ, որ Նա քո միջոցով միշտ փրկի Իրեն հավատացող մեր ժողովրդին, եւ մենք Նրան, որ ծնվեց քեզնից, փառավորենք այժմ եւ հավիտյանս հավիտենից, ամեն:

Հոդվածը եւ գրաբարից փոխադրությունը՝
Գեւորգ սրկ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ
Աննա ՀՈՎՍԵՓՅԱՆԻ

Պատմագիտական նոր հետազոտությունների ընտրանի

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը շարունակում է մեծ եռանդով հանդես գալ հայագիտության կարեւորագույն հիմնահարցերի շուրջ հրավիրված գիտաժողովներում ու հավաքներում, ինչպես նաեւ գիտական տարբեր հանդեսներում հրապարակել հետազոտական հոդվածներ: Վերոնշյալ զեկույցների եւ հոդվածների ընտրանին պատմաբանը հայ ընթերցողին է ներկայացրել «Պատմագիտական հետազոտություններ» առանձին գրքով:

Ընդգրկված նյութը ժամանակագրական ու թեմատիկ որոշակի ուղղվածություն ունի: Այն ներառում է հայ պատմագիտության առջեւ դրված հրատապ խնդիրները՝ Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրությունը, հինգ հարյուրամյա հայկական տպագրության անցած ուղին, հայոց պետականության պատմափուլերն ու դրա պարբերացման հիմնահարցերը, արքայական ազնվական տոհմերի դերը հայոց պատմության հոլովույթում, Արեւմտյան Հայաստանը Արեւելք–Արեւմուտք տնտեսական հարաբերությունների խճապատկերում, Երեւանի՝ որպես Արեւելյան Հայաստանի վարչաքաղաքական կենտրոնի դերակատարությունը, հայոց ազգային-ազատագրական պայքարի նորօրյա դիտարկումներն ու իմաստավորումները, 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության հռչակման եւ կայացման պատմական նշանակությունը եւ այլն:

Մեծ ուշադրությամբ են ընթերցվում եւ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Ջավախքին ու հայ-վրացական հարաբերություններին վերաբերող հրապարակումները: «Ջավախքի հիմնահարցը հայ-վրացական հարաբերությունների համատեքստում (1918 թ. մայիս – 1919 թ. հունվար)» հոդվածում նա վերստին փորձում է պարզ ու հստակ իմաստավորել այդ փուլի հայ-վրացական հարաբերությունների ողջ ենթաշերտերն ու հանգել անհրաժեշտ եւ ճշմարտացի եզրահանգումների:

➥ էջ 8

Հայ դպրության հիմնադիրը

➥ *էջ 2*

Մաշտոցը, իր կատարած հոգեւոր սխրանքի ներքին ոգեւորությամբ, հայրենիք է բերում հայոց գիրը՝ այնպես խանդավառ, ինչպես Մովսես մարգարեն Սինա լեռից իջեցնում էր Աստծու տասը պատվիրանները:

Ս. Մեսրոպ Մաշտոցի մեծագույն սխրանքը, որով սկզբնավորվեցին Սուրբ Գրքի հայերեն թարգմանությունը, ոսկեդարյան կաճառի առաջացումը եւ հայերեն ինքնուրույն գրականության ստեղծումը, դարերի հոլովույթում մշտապես եղել է տարփողելի եւ պանծալի:

Մաշտոցը, լինելով վանական եւ հոգեւորական, մանկավարժ եւ ժողովրդական քարոզիչ, միեւնույն ժամանակ հեղինակ է հոգեւոր բնույթի որոշ ստեղծագործությունների: Կորյունի վկայության համաձայն՝ Մաշտոցը հեղինակել է *«ճառս յաճախագոյնս.... լի ամենայն ճաշակաւք աւետարանական հաւատոցն ճշմարտութեան»:* Այս ճառերը, սակայն, հայտնի են նաեւ Ս. Գրիգոր Լուսավորիչ հայրապետի (302–325 թթ.) անունով (Ագաթանգեղոսի վկայությամբ): Մանուկ Աբեղյանը, Գառնիկ Ֆնտգլյանը, Սեն Արեւշատյանը եւ ուրիշներ այս ճառերի հեղինակությունը վերագրում են Մաշտոցին: Հաճախապատում ճառերում առկա են 381 թ. Կ. Պոլսի տիեզերաժողովում ընդունված դավանաբանական սկզբունքները Սուրբ Հոգու վերաբերյալ, ինչպես նաեւ նկատելի է եկեղեցական ականավոր գործիչների՝ Ե դարում թարգմանված հայրաբանական ժառանգության որոշ գաղափարների ազդեցությունը: Սակայն այս տեսակետի կողքին տեղ է գտել նաեւ Աբրահամ Զամինյանի, Լեւոն Խաչիկյանի առաջարկած հնարավոր քննական մոտեցումը, համաձայն որի՝ Ս. Գրիգոր Լուսավորչի հեղինակած «Հաճախապատում ճառեր»-ը թարգմանել է Մաշտոցը 420-ական թթ. (հունարենից կամ ասորերենից), հարստացրել ժամանակի հուզող հասարակական, վարդապետական խնդիրների աստվածաբանական նկարագրություններով: Այս կարծիքին նպաստել է նաեւ այն հանգամանքը, որ «Հաճախապատում ճառեր»-ի ընդօրինակված ձեռագրերում նշվում է միայն Ս. Գրիգոր Լուսավորչի անունը: Բացի այդ՝ երկն առավել մեծ տարածում կունենար Ս. Գրիգոր Լուսավորչին վերագրելու դեպքում: Ս. Գրիգոր Նարեկացին իր «Երգ երգոցի մեկնության» եւ Գրիգոր Մագիստրոսն իր «Մեծ են գործք» աշխատության մեջ դարձյալ հիշատակում են Ս. Գրիգոր Լուսավորչին եւ ընդգծում նրա հեղինակությունը (տես Լ. *Տեր-Պետրոսյան,* Դասեր հայ եկեղեցական մատենագրությունից (Ե դար), Սոչի, 1993, էջ 35): Մաշտոցը ձեռքի տակ կարող էր ունենալ Ս. Գրիգոր Լուսավորչի երկերը եւ հայացներ ու օգտագործեր դրանք քարոզխոսության մեջ. սույնի մասին է վկայում այն փաստը, որ է դարի մատենագիր Եզնիկ քահանայի կազմած՝ հայոց հայրապետների, թագավորների ցանկում նշվում է, որ Ս. Գրիգոր Լուսավորչին եւ ընդգծում նրա հեղինակությունը (տես Լ. *Տեր-Պետրոսյան,* Դասեր հայ եկեղեցական մատենագրությունից (Ե դար), Սոչի, 1993, էջ 35): Մաշտոցը ձեռքի տակ կարող էր ունենալ Ս. Գրիգոր Լուսավորչի երկերը եւ հայացներ ու օգտագործեր դրանք քարոզխոսության մեջ. սույնի մասին է վկայում այն փաստը, որ է դարի մատենագիր Եզնիկ քահանայի կազմած՝ հայոց հայրապետների, թագավորների ցանկում նշվում է, որ Ս. Գրիգոր Լուսավորչին վերաբերող վարքագրական զրույցները հավաքագրել եւ առանձին շարակարգել է Մաշտոցը. «....կարգ գործոցն Գրիգորի նորոգեալ արամբ միով երանելեաւ Տարաւնացւոյ, որում անուն Մեսրովպ ճանաչիւր» («Մատենագիրք Հայոց», Ը դար, հտ. Զ, Անթիլիաս–Լիբանան, էջ 1035):

Ս. Գրիգոր Լուսավորչի անունով է երկը ներկայացվել տպագրության (1737 թ.՝ Կ. Պոլսում, 1838 թ.՝ Վենետիկում, 1894–1896 թթ.՝ Վաղարշապատում), իսկ 1872 թ. Ռեգենսբուրգում Յոհան Միխայել Շմիդտը «Հաճախապատում ճառեր»-ը թարգմանել է գերմաներեն:

Ժամանակակից մատենագետների կարծիքներն այս հարցում միանշանակ չեն: «Հաճախապատում ճառեր»-ը անգլերեն թարգմանած Աբրահամ Տերյանի կարծիքով՝ ճառերը պետք է շարադրված լինեն Զ դարի կեսերին, քանզի դրանցում նշմարվում են Ս. Բարսեղ Կեսարացու «Հարցողաց գրքի» հայերեն թարգմանության ազդեցություններ (տես *Հ. Քյոսեյան,* Ներածություն հայ եկեղեցական մատենագրության, Երեւան, 2018, էջ 15, ծան. 1):

23 գլխից բաղկացած «Հաճախապատում»-ը քարոզների եւ խրատական ճառերի ժողովածու է՝ քրիստոնեական կենցաղավարության եւ բարոյագիտության ծրագրային ձեռնարկ: «Հաճախապատում ճառեր»-ը դավանաբանական նշանակություն են ունեցել: Հոգեւոր բնույթի այս ժողովածուում տեսականորեն հիմնավորվում է նաեւ առաջին անգամ քրիստոնեական պետական կրոնի, գեղագիտության, տնտեսության, իրավունքի, քաղաքականության եւ պետության անհրաժեշտությունը: Ա եւ Բ ճառերը ներկայացնում են Սուրբ Երրորդության վերաբերյալ աստվածաբանական մոտեցումները (աթանասյան եւ կապադովկյան): Ճառերում խոսվում է Սուրբ Երրորդության բնույթի, անդրանցական առանձնահատկությունների, իրար միջեւ ունեցած փոխհարաբերությունների, բնութենական ընդհանրության եւ անձնավորական տարբերությունների մասին: Հեղինակը շեշտում է, որ Աստված նյութն ստեղծել է ոչնչից: Մյուս ճառերն ունեն բարոյախրատական բնույթ. դրանք վերաբերում են առաքինությանը, ապաշխարությանը, չարագործություններից հեռու մնալուն: Ազատ կամքի վարդապետությունը բարոյագետ հեղինակի ուշադրության առարկան է դարձել Ե ճառում, որը մարդաբանության ուսումնասիրման վաղագույն համապարփակ հատվածն է: Աստված մարդուն ստեղծել է անձնիշխան կամքով. նա է բարին կամ չարը ընտրողը, իր կամքը Աստծուն հայտնողը: Մարդկային կամքի չարահակության դեպքում, սակայն, տեղի չի ունենում նրա եւ Աստծու կամքի ներդաշն գոյակցությունը (սիներգիզմ): Չարը գործողները ենթարկվում են պատժի եւ աստվածային դատաստանի: ԺԱ ճառում տեղ է գտել սիրո ներբողման շատ գեղեցիկ մի հատված, որն ունի գեղարվեստական արժեք. *«Սէր սուրբ մայր է առողջութեան, անարատութեան, անբծութեան, որ խնամէ եւ յորդորէ յառաքինութիւն եւ յարդարէ յամենայն բարեգործութիւնս: Սէր աղբիւր է ամենայն բարեաց, որ արբուցանէ զսուրբ անձինս. եւ գրաւական ամենայն երանութեանցն, եւ մեծութեան պարգեւացն Աստուծոյ բաշխող: Սէր բղխումն երախտեաց Քրիստոսի եւ վայելեցուցիչ յանպատում շնորհս նորա. լուծիչ խռովութեան եւ տուիչ խաղաղութեան, լուսաւորիչ մտաց եւ անդամոց»:* Ուշագրավ է ԺՁ ճառը, որը ԻԳ ճառի հետ հասցեագրված է անապատական ճգնակյացներին. ներառում է պատգամ՝ ի հիշատակ սրբերի տոնակատարության: Սա վկայություն է Հայոց վաղ Եկեղեցում սրբոց տոների կանոնական լինելու մասին: ԻԳ ճառը՝ «Խրատք ճգնութեան եւ ցոյց հանդիսից, որ յառաքինութեան յորդորմունս», վանական պատմության մեջ առանձնահատուկ է, քանի որ այստեղ առկա նյութն առնչվում է վանական կանոնադրությանը. այն կանոններ է ընդգրկում վանականների կենցաղավարության, նրանց («վերակացու, տնտես, շաբաթաւոր, տեսուչ հիւրոց») պարտականությունների վերաբերյալ եւ այլն:

Մաշտոցի աշակերտը՝ Կորյունը, պատմում է, որ իր ուսուցիչը, արեւմտյան կողմերում ստանալով Եկեղեցու հայրերի բազում շնորհագիր մատյանները, վարդապետում էր խորությամբ եւ հեղում բարությամբ:

Ժողովածուում կան նաեւ առանձին մեծածավալ ճառեր. դրանցից են՝ պահքի մասին (Թ), «Վասն հոգւոց մարդկան բացայայտութիւն» (ԺԵ), «Վասն մարտիրոսացն վարդապետութիւն ուսմանց» (ԺԶ), «Յորդորումն ապաշխարութեան խոստովանեալ» (ԺԹ) եւ այլն:

Մաշտոցն այլ ազգերի իրավարարության եւ հունական գրավոր իրավունքի վերաբերյալ խոսելիս, սակայն, տեղեկություններ չի հայտնում հայերի մասին: Դրա փոխարեն նա սկզբի ճառերում անդրադառնում է դավանաբանական խնդիրներին, որոնք չէր կարող անուշադրության մատնել: Այս ճառերից յուրաքանչյուրը վերաբերում է որոշակի նյութի, սակայն հեղինակը երբեմն չի կարողանում կենտրոնանալ մի խնդրի վրա: Կիրառված են ճարտասանական բազմազան միջոցներ, որոնցով հեղինակը փորձում է առավել դյուրին դարձնել ճառերի ըմբռնումն ունկնդիրների եւ ընթերցողների համար: Մաշտոցը հաճախ հորինում է բովանդակությամբ հակառակ, իսկ կազմությամբ միանման ասացվածքներ, որոնց միջոցով նկարագրում է բարի ու չար գործերը, դրանց վարձատրությունը կամ պատիժը՝ ըստ Աստվածաշնչի: Հիմնականում ձգտում է փոխաբերություններով եւ զանազան այլ պատկերներով կենդանի դարձնել արտահայտությունը՝ երբեմն գործածելով աստվածաշնչյան խոսքերը: Ինչպես նշում է Մ. Աբեղյանը, նա սիրում է բնությունից ու կյանքից նմանություններ, երբեմն հակադրություններ բերել՝ նյութն առավել պարզ եւ հասանելի դարձնելու համար: Օրինակ՝ «Եւ որպէս արեգակն այս, որ լուսաւորէ զերկիր եւ որ ի սմա են արարածք՝ որ երեւելիք են ի ծովու եւ ի ցամաքի, այսպէս հաւատոյն ճշմարտութիւնն եւ սրբութիւնն լուսաւորէ զմիտս սիրողացն Աստուծոյ» (Բ, 19. *Մ. Աբեղյան,* Երկեր, հտ. Գ, Երեւան, 1968, էջ 139–142):

Ահա մեկ հատված առաջին ճառից. «Մի է բնութիւն եւ գոյութիւն Ամենասուրբ Երրորդութեանն, եւ իւր է ինքնութիւնն եւ ոչ յայլմէ գոյութենէն.... Իսկութիւն անծին եւ էութիւն անսկիզբն, մշտնջենաւորութիւն անսահման եւ ճշմարտութիւն անփոփոխելի, կեանք եւ կեցուցիչ ամենայն կենդանեաց: Հայր է Որդւոյ, եւ բղխումն Հոգւոյ. Աստուած է եւ արարիչ արարածոց երեւելեաց եւ աներեւութից....» («Մատենագիրք Հայոց», Ե դար, հտ. Ա, Անթիլիաս–Լիբանան, 2003, էջ 7): Ամբողջ գիրքն այսպես հոգեւոր լույսի տարածումն է՝ առանձին հարցերի քննությամբ: Մ. Աբեղյանը ու Հր. Աճառյանն ընդհանրություններ են նկատել «Հաճախապատում ճառեր»-ի եւ Եզնիկ Կողբացու գրքի միջեւ: Հր. Աճառյանը գրում է. «Հաճախապատումը ծայրեծայր Եզնիկ է բուրում....»: Այս զարմանահրաշ ճառերը մարդկային հանճարից ճառագած լույս են, հոգու աստվածառաք պոռթկում՝ միախառնված աստվածային արարչագործության փառաբանությանը:

«Կանոնագիրք Հայոց»-ի միջնադարյան խմբագրություններում կա փոքրածավալ գրվածք՝ վերնագրված *«Երանելւոյն Մեսրոպայ Հայոց վարդապետին»,* որը հավանաբար առավել ընդարձակ բնագրի մի մաս է (տպագրել է Ն. Ակինյանը 1958 թ.): Համաձայն Ն. Ակինյանի՝ «....առանց տարակույսի հանված է Մաշտոց վարդապետի մեկ ճառից....» (*Հ. Քյոսեյան,* նշվ. աշխ., էջ 59): Ուսուցողական այս պատառիկը գրված է ժամանակի հմայությունները դատապարտելու եւ մերժելու համար: Նզովված են համարվում բոլոր նրանք, ովքեր հմայություններ են կատարում կամ հավատում են դրանց: Հմայությունների շարքը, որը հեղինակը թվում է, բավականին երկար է. «....երազք եւ հմայք եւ յուռութք եւ բաջաղանք եւ դիւթութիւնք եւ թովչութիւնք եւ հարցուկք եւ ձեռնածուք եւ դեղահատք եւ խտիրք եւ որ ինչ նման են սոցին....»: Երկը կառուցվածքով եւ բովանդակությամբ նման է «Կանոն սրբոյն Գրիգորի Պարթեւի դարձեալ հարցումն եւ պատասխանիք նորա» աշխատությանը: Այս երկերի գրման շարժառիթը եղել է հեթանոսական կենսունակ գաղափարաբանության դեմ քրիստոնեական գաղափարախոսության ներկայացման անհրաժեշտությունը: Նշյալ հանգամանքը մեծ ազդեցություն է ունեցել ինչպես «Հաճախապատում ճառեր»-ի, այնպես եւ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» ու Վահրամ Ռաբունու «Հարցմունք եւ պատասխանիք ի գիրս Ծննդոց» երկերի ստեղծման վրա:

Շարակնոցներում հիշատակվում է նաեւ Մեսրոպ Մաշտոցը՝ որպես շարականագիր (չմոռանանք, որ նա եղել է հայ շարակներգության հիմնադիրներից): Մաշտոցին են վերագրում Ապաշխարության շարականները: Ոչ միայն այս, այլ նաեւ Երից մանկանց շարականների հնագույն հատվածը Ա. Մնացականյանը համարում է Մաշտոցի հոգեւոր երաժշտական ժառանգության մի մասը: Մաշտոցի գրչին են պատկանում Ապաշխարության կարգի «Հարցք»-ը, «Ողորմեա»-ները, «Տէր յերկնից»-ները, «Մանկունք»-ը եւ «Համբարձիք»-ը: Մաշտոցի ժամանակ դրանք կոչվել են երգեր, իսկ Ստեփանոս Սյունեցու օրոք ներմուծվել են նորակազմ Շարակնոց եւ անվանվել շարական: Մաշտոցի՝ շարականներ հեղինակելու մասին ուշագրավ եւ անծանոթ աղբյուրներից քաղված տեղեկություններ է փոխանցում Կարապետ Սասնեցին (ԺԱ-ԺԲ դդ.) իր «Ներբողեան յաղագս վարուց եւ մահուան Ս. վարդապետին Մեսրոբայ» երկում: Մաշտոցը հոգեւոր երգեր է հորինել նաեւ Քառասնորդաց պահքի ընթացքում երգելու համար:

Շարականները հոգեւոր ապրումի բարձրաթռիչ արտահայտություն են՝ ապաշխարության արտասուքներ հեղող հուզագրգիռ զգացողություններով լեցուն: Հեղինակը թողություն է խնդրում մեղքերի համար եւ հայցում ամենագութ Տիրոջ ողորմությունը.

Մեղք իմ բազում են յոյժ,
Ծանր են քան զաւազ ծովու,
Քանզի քեզ միայնոյ մեղայ,
Ողորմեա՛ ինձ, Աստուած:

Բա՛ց, Տէր, զդուռն ողորմութեան,
Որ ողբալով կարդամ առ քեզ,
Քանզի քեզ միայնոյ մեղայ,
Ողորմեա՛ ինձ, Աստուած:

Հեղ յիս զգթութիւնդ քո,
Բազումողորմ եւ մարդասէր.
Քանզի քեզ միայնոյ մեղայ,
Ողորմեա՛ ինձ, Աստուած:

Մեսրոպ Մաշտոցը մեղքի մեջ թաթախված մարդու հոգու փրկությունն է աղերսում՝ օգտագործելով այլաբանական այնպիսի պատկերներ, որոնք տարածված են հայրաբանական գրականության մեջ (օրինակ՝ «ծով–նավ–նավապետ» հանգույցը «Ծով կենցաղոյս» շարականում): Աստված կարող է փրկել եւ թողություն շնորհել նրան, ով անկեղծորեն զղջացել է իր գործած մեղքի համար եւ վճռել է այլեւս չշեղվել Տիրոջ պատվիրաններից, որոնք լույս են իր շավիղներին: ➥ *էջ 8*

Չմրուխտ վազերի սգերգը

↩ էջ 3

Եռանդուն Գեղամը, արդարեւ, գտնված, շատ ցանկալի եւ անփոխարինելի «կադր» էր: Իզուր չէին պահեստապետը եւ մյուս աշխատակիցները կիսակատակ ասում, թե նրան մեծագույն սիրով նույնիսկ հաստիքավոր աշխատող կընդունեին, եթե... կալանավոր չլիներ...

Շուտով նոր միջավայրում Գեղամի կերպարանքն էլ բարեփոխվեց. նախկին՝ հյուծված, նկուն, ծանր շնչող զարհուրելի կմախքն օր օրի միս ու արյուն ստացավ, դարձավ անճանաչելի գեղեցիկ տղամարդ, սակայն... իր դժխեմ կարգավիճակի եւ կալանավորի տգեղ, անհաճո հագուստով...

Պահեստում սահուն անցավ նրա կալանքի եւս մեկ տարին՝ քսաներեքերորդը: Իսկ հաջորդ գարնանը նրա բանտային կյանքում ճակատագրական հույժ հետաքրքիր մի դիպված եղավ. Աստված երկրորդ անգամ սիրեց Գեղամին՝ մատուցելով նախախնամության աներեւակայելի անակնկալը:

....Սիբիրյան այդ տարածաշրջանում տարվա ամբողջ երեք եղանակ՝ գարուն, ամառ, աշուն, միասին... հազիվ երկու-երեք ամիս էր տեւում: Այս ժամանակաընթացքում էր, որ ճամբարի համար, արդեն ոչ ձյունածածկ ճանապարհներով, բեռնատար ավտոմեքենաներով քաղաքից հախուռն ներկրվում, պահեստավորվում էին տնտեսական, շինարարական, պարենային եւ անհրաժեշտ այլ ապրանքներ: Կալանավոր, սակայն միշտ խելամիտ ու ձեռնահաս Գեղամի համար բացառություն արվեց, եւ անցագրային համապատասխան ձեւակերպումներից հետո զինյալի հսկողությամբ նրան էլ քաղաք՝ գնումների տարան:

Ստալինիզմի շորշոփները, սակայն, սովորույթի ուժով դեռ կային: Հերթական անգամ գնումների գնացած ժամանակ, երբ նրանց բեռնատարը քաղաք մտավ, այնտեղ վերահսկիչ անվտանգային մարմինները շուրջկալով պարզում էին՝ երկոտանի շնչավորներից ով ով է: Ահա նրանք մոտեցան բեռնատարին եւ պահանջեցին Գեղամենց «անձնակազմի» փաստաթղթերը:

Այս անգամ, հակառակի պես, անփութորեն խախտել էին անցագրային կանոնակարգի կարեւոր մի պահանջը. չունեին Գեղամի անունով հատուկ թույլտվության նույն օրվա հրամանի քաղվածքը: Խախտումը բացահայտվելու դեպքում առնչություն ունեցող պատասխանատու բոլոր անձանց անկասկած կդատապարտեին՝ նրանց էլ դարձնելով... կալանավոր, կավելացվեր նաեւ Գեղամի պատժաժամկետը:

Պահն օրհասական էր, բախտորոշ...

Գեղամը, վերահաս վտանգը պատկերացնելով, գունատվեց եւ ամբողջ մարմնով ցնցվեց, սակայն իրավիճակից անվնաս ելքը որպեսզի ինքը գտավ: Նա տագնապալի ձայնով, կոկորդով մեկ բղավեց՝ մեռնո՛ւմ եմ, թող ինձ շտապ հիվանդանոց հասցնեն:

Այնքան համոզիչ էր նրա աղերսալի ձայնը, մանավանդ՝ դալկացած դեմքը, դողդողոցը, որ ստուգողները համաձայնեցին եւ նրանց մեքենան ուղեկցեցին մոտակա օկրուգային բանտային հիվանդանոց: Ընդունարանից զանգահարեցին եւ հրավիրեցին հերթապահ բժշկին: Վախվորած Գեղամի մռայլ հոգում հույսի իրական մի ճառագայթ շողաց. բժիշկը հայ էր...

Եկավ մրահոն, հայկական՝ անշփոթելի համակրելի դիմագծերով բժիշկը եւ Գեղամին ընդունարանի փոքրիկ մի առանձնասենյակում սկսեց բուժզննել: Ընդհատ-ընդհատ տնքոցների միջից Գեղամը հայերեն կամացուկ, պաղատագին ձայնով խնդրեց.

— Բժիշկ ջա՛ն, ի՛մ հայ, մատա՛ղդ ըլնեմ, ինձ փրկիր էս բորենիներից...

Բժիշկը զուսպ շարունակեց հիվանդի զննումը եւ աննկատ, շշուկով հարցրեց՝ Հայաստանի՞ հայ է, ո՞ր տեղացի:

Գեղամը շշուկով պատասխանեց՝ Աշտարակի շրջանի Ոսկեվազ գյուղից է: Բժիշկ Հարությունյանը, այդ լսելով, ինչպես Գեղամին թվաց, մի տեսակ խորհրդավոր, թույլ ժպտաց, դուրս եկավ ընդունարանից: Քիչ անց նա ստուգողներին եւ ճամբարի ուղեկիցներին կնքված ու ստորագրված մեկական պաշտոնական տեղեկանք հանձնեց առ այն, որ նախակաթվածային վիճակի հասած հիվանդն անհապաղ հոսպիտալացվում է:



Բարեշրջում՝ ուղիղ 180 աստիճանով...

Կապույտ խալաթավոր երկու ուժեղ տղամարդ Գեղամին պատգարակով առանձին, մեկտեղանոց հիվանդասենյակ տարան, հիվանդանոցային մաքուր հագուստ հագցրին: Շուտով նրան այցելեցին թերապեւտիկ բաժանմունքի վարիչ, նույն ինքը՝ բժշկական ծառայության փոխգնդապետ Հարությունյանը եւ բուժակներ ու բուժքույրեր՝ իրենց չափիչ-ստուգիչ բուժսարքավորումներով:

Վերջինների հեռանալուց հետո, երբ հիվանդասենյակում երկուսով մնացին, բժիշկը գոհունակությամբ նշեց, որ արդեն կանոնավորվում են սրտի ռիթմը եւ զարկերակային ճնշումը:

Բժշկի հայացքում հանելուկային ինչ-որ անսքող ջերմություն կար, աչքերում՝ անթաքույց ժպիտ: Գեղամը կարծեց, որ հեռավոր այս երկրում բժիշկը հայ մարդու է հանդիպել եւ դրա համար է ուրախ: Սակայն շուտով՝ ընդամենը րոպե անց, հանելուկայինն ամբողջովին ջրի երես ելավ... Ուղիղ նայելով Գեղամի աչքերի մեջ՝ երկուսի համար էլ հարազատ, մայրենի Խոյ-Սալմաստի (Ուրմիայի) բարբառով բժիշկը հարցրեց.

— Իմ սիրելի՛ ոսկեվազցի, դը մկա ասա տսնամ տու մեր կեղի վա՞ր մե ազգատոհմեն ես:

Այսպիսի անսպասելի խոսքի վրա Գեղամն ամբողջ էությամբ ալեկոծվեց, դեմքը կաս-կարմիր դարձավ, ուրախությունից սիրտն ու հոգին տակնուվրա եղած՝ արագ նստեց աթոռակին, որպեսզի... գլխապտույտից վայր չընկնի... Ապա ինքը քննախույզ հայացք սեւեռեց բժշկի դեմքին՝ ճանաչելու, թե նա «ումոնցից» է:

— Ա՜յ, ես քո Աստծուն մեռնե՛մ, պժիշկ ջա՛ն, ուրեմն տու էլ ես ոսկեվազցի, խա՞մ,— խոսեց շնչակտուր, խիստ զգացված:— Ես Սարքիսենց Քեղամն եմ, մատա՛ղ, իսկ տու, հլը չասես, եթե չեմ սխալվելի, մեր հարգելի Մուխսունց Թումասի տղան ես՝ Սերոժը կամ Սաշան... Սերո՛ժը... վայ ես քո հոգուն մեռնեմ, դոկտոր ջա՛ն:

Երկուսն էլ ուրախ էին, երեւի այդ պահին հսկայածավալ Սիբիրի ամենաուրախները...

Բժիշկ Հարությունյանը խնդրելու պես Գեղամից պահանջեց՝ ոչ մի խոսք մեկմեկու ծանոթ ու երկրացի լինելու մասին. իրար չեն ճանաչում: «Իմացի՛ր, ինձ կմեղադրեն կողմնակալության համար՝ շատ ծանր հետեւանքներով»,— ասաց մտահոգ՝ ճակատը շփելով: Նա նաեւ խոստացավ, որ ամեն հնարավորը կանի՝ Գեղամին հիվանդանոցում երկար պահելու, որպեսզի նա բուժված-կազդուրված այստեղից... տուն գնա:

Բժիշկը գնաց: Գեղամին տեւականորեն շատ անսովոր ու հաճելի զգացում էր համակել: Անակնկալը շշմեցուցիչ էր... Այնպես հուսավառվեց նրա թալկացած հոգին, որ արդեն իսկ կասկած չունի՝ ողջ-առողջ Հայաստան կհասնի...

Ամեն օր ու ժամ սրտի խորքում թե լեզվի վրա նա օրհնում-օրհնաբանում էր իր ամենահիրական փրկարարի՝ բժշկի բարի ծնունդը...

Գյուղի նշանավոր գերդաստանից էր սերում բժիշկ Հարությունյանը: Անցյալ դարում նրա մեծ պապը ոտքով Երուսաղեմ է հասել, այցելել Քրիստոսի գերեզմանին ու վերադարձել տուն՝ վաստակելով «Մուխսի» պատվանունը:

Հայրը՝ պարոն Թումասը, ժամանակի առաջադեմ, կորովի գործարար այր էր: ԽՍՀՄ-ի որդեգրած «Նոր տնտեսական քաղաքականության»՝ ՆԷՊ-ի տարիներին նա գյուղում շեշտակի մեծացրել է խաղողի մթերման ծավալը, արտասահմանյան նորագույն տեխնոլոգիայով վերազինել գինու-օղու արտադրությունը: Սակայն մի քանի տարի անց նույն խորհրդային իշխանությունը, կուլակաթափ անելով, խլել է Հարությունյաններին պատկանող արտադրամիջոցները, մառանն ու պահեստները, երկհարկանի առանձնատներն ու ինչքը... Այո՛, բռնագրավել, խլել են, պետականացրել, ամբողջը հանձնել են նորաստեղծ կոլտնտեսությանը, բայց հո զավակների խելքն ու բարեկրթությունն էլ չէի՞ն կարող խլել...

Բժշկի կրտսեր եղբայր Ալեքսանդր Հարությունյանը, հետագայում՝ ՀԽՍՀ վաստակավոր շինարար, հանրապետությունում ճանաչված ու հարգված կառուցապատող էր: Նաեւ նրա նվիրական, գործուն ջանքերով էր, որ մարմնավորվեց ու վեր հառնեց ժողովրդական, հանճարեղ ճարտարապետ, ոսկեձեռիկ Ռաֆայել Իսրայելյանի նախագծած Սարդարապատի հոյակերտ հուշահամալիրը:

Իսկ ահա Մոսկվայի բժշկական ինստիտուտի շրջանավարտ Սերյոժա Հարությունյանին, ճակատագրի կամոք, վիճակվել էր զինվորական բժիշկ դառնալ, գործուղվել եւ ստալինյան խիստ ռեժիմի պայմաններում շուրջ քառորդ դար զգուշորեն աշխատել Սիբիրի զանազան քաղաքներում:

Ճշմարիտ է՝ հարկադրված, ունեզրկված ու դառնացած, արցունքները զուսպ՝ ներս հոսեցնելով, նա հեռացավ հայրենիքից, սակայն նրա հոգու ծալքերում, որպես անթեղված կրակ, ամենուր եւ միշտ մնացին քաղցր բնօրրանի ջերմագին, անպարպելի սերն ու անդարմանելի կարոտը: Սիբիրյան անօրեն երկրամասում նա անտրտունջ տանում էր իր ծանր խաչը, որն այնքան առարկա չէր, որքան իմաստ ու երեւույթ: Եվ ահավասիկ անակնկալ՝ նա հանդիպեց... համագյուղացու՝ Գեղամին, որը նրա համար պարզապես հայրենյաց կենդանի մի մասնիկ է:

Բաժանմունքի բուժանձնակազմի ուղեկցությամբ կատարվող ամենօրյա համայցերին բժիշկ Հարությունյանը հիվանդ Գեղամ Սարգսյանի հետ խոսում էր միայն ռուսերեն, չոր, պաշտոնական ոճով, լրջադեմ, մի տեսակ սառն ու օտարոտի: Դեղորայքային նշանակումներ էին անում եւ անցնում հաջորդ հիվանդասենյակ: Հետո՝ օրվա ընթացքում, աչքից ու ականջից հեռու, բարեհարմար ժամանակ նա սրտի թելադրանքով՝ լայն ժպիտով պիտի այցելեր Գեղամին:

— Քեղա՛մ ապեր, ախր տու ընձնմեն մե էրկու տարի ուշ հեռացար, ավելի ճիշտ՝ հեռացրին, մեր պաշտելի հայրենիքեն, դե ասա, իմանամ՝ էլ ի՞նչ կար-չկար մեր կեղում, Օշականում, Աշտարակում, Էջմիածնում, Երեւանում...

Եվ նրանք զրուցում էին... դառն ու անուշ...

Գեղամը, իհարկե, համագյուղացուն պատմել էր գլխով անցածն ու սիբիրյան դաժան, հազար մահի կողքով անցած ոդիսականը: Մի անգամ էլ նա սիրելի բժշկին վիշտ ու ծիծաղ բովանդակող երկու փոքր պատմություն արեց կոլտնտեսային կյանքից:

....Կոլտնտեսությունների կազմավորման շրջանում վերադասից մի բոլշեւիկ պաշտոնյա է գյուղ գալիս, ժողով են գումարում, ու նա մարդկանց խանդավառված կոչ է անում վստահորեն անդամագրվել կոլեկտիվ տնտեսությանը, քանի որ, ասում է՝ կոլխոզը հրաշալի բան է...

— Սո՛ւտ կըլնի,— վերջին շարքերից հնչում է տղամարդու մի բամբ ձայն:

Հռետորը չլսելու է տալիս եւ շարունակում ճառը.

— Ընկերնե՛ր, կոլտնտեսային կյանքը երջանկացնելու է բոլորիդ:

— Սո՛ւտ կըլնի,— ժողովականների միջից դարձյալ բարձր որոտում է նույն թավ ձայնը:

Հռետորն էլի շարունակում է.

— Շեշտակիորեն կբարձրանա կոլեկտիվ տնտեսության յուրաքանչյուր անդամի կյանքի որակը: Աշխատում, ստեղծում ենք միասին, բարիքներն արդարացի բաժանվում են յուրաքանչյուր կոլտնտեսականի՝ ըստ վաստակած աշխօրերի:

— Արդարացի՞... Սո՛ւտ կըլնի,— թնդում է նույն ձայնը՝ ավելի մեծ աշխուժություն առաջացնելով ժողովականների շարքերում:

— Այդ ո՞վ է իր դեմոբիլիզացիոն ռեպլիկաներով խանգարում մեզ: Ձերբակալե՛լ, անմիջապես ձերբակալել ժողովրդի այդ թշնամուն,— կարգադրում է զայրացած պաշտոնյան:

— Այ էդ մեկը ճիշտ կըլնի՛,— վերջին անգամ արձագանքում է ըմբոստ մարդը, եւ նրան տանում են... անվերադարձ...

Բժշկին ավելի դուր եկավ Գեղամի հաջորդ պատմածը, քանզի այն չուներ տխուր, ողբերգական ավարտ:

....Մեծահասակ կոլտնտեսական Արշալույս ապերը՝ բուժանյութով լի ծանր սարքը շալակին, թումբ առ թումբ անցնելով՝ փոշիացրած բուժող հեղուկը ցողում է խաղողի վազերի վրա: Քայլերն անում է համաչափ, ձեռքով սեղմում-մղում է սարքի լծակը, ամեն քայլի ու ձեռքի ռիթմով չափ տալով՝ երգում է իր նոր հորինած խաղիկը.

«Ամա՛ն, կոլխոզ, քո դարդեն
Պատռվավ փորիս փարդեն»...

Կողքի թմբում բուժաշխատանքների որակն ստուգող գյուղատնտես Հմայակ Մանուկյանը լսում է Արշալույս ապոր խաղիկն ու սրտանց բարձր ծիծաղում: Ապա բարեկամաբար զգուշացնում է նրան. «Վատ ժամանակներ են. մտքիդ մեջ երգիր... քո գործընկերների մեջ էլ մատնիչներ կլինեն, ու բանը կավարտվի... Սիբիրով...»:

Ծիծաղեցին, հանգստացան:

Քիչ անց բժիշկը մտասեւեռ շփեց խոհուն ճակատը, խիստ լրջացավ եւ որոշ դադարից հետո ասաց մի խոսք, որն ավելի լուսավորեց զրուցակցի միտքը, եւ որի վրա, բժշկի գնալուց հետո էլ, երկար խորհեց Գեղամը.

— Տասնյակ միլիոնավորներն ու Թաքոյի Համոն, մեծ հաշվով, խորհրդային համակարգի զոհերն են, էլի ուրիշ միլիոնավորները, նրանց թվում՝ դու եւ ես՝ նույն համակարգի տուժածներս...

Շարունակելի

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Դարավոր պայքար

Հայաստանի վրա սելջուկ-թուրքերի արշավանքներից շատ առաջ (շուրջ երեք հազար տարի) հայ ժողովուրդն արդեն կազմավորվել էր, ստեղծել սեփական գիրն ու գրականությունը, նյութական եւ հոգեւոր մշակույթը, պետականությունը: Պատմությունը հաստատել է այն իրողությունը, որ հայոց գիրն ու դպրությունը, մշակույթն ու գիտությունը հայապահպանության հզոր միջոցներ են: Հայ ժողովուրդը բազմաթիվ թշնամիների դեմ պայքարել է ոչ միայն զենքով, այլ նաեւ գրչով, հետամնաց զավթիչներին հակադրվել է իր հարուստ մշակույթով, ազգային անխառն դիմագծով՝ հաճախ ձախողելով օտար նվաճողների բռնի ձուլման քաղաքականությունը:

ԺԱ դարում սկսվում են սելջուկ-թուրքերի մահատարած եւ ավերիչ արշավանքները, որոնք, ի վերջո, հանգեցնում են Օսմանյան Թուրքիայի ստեղծմանը: Այն դառնում է աշխարհի ամենաբիրտ բռնապետությունը, որը դժոխային կացություն է ստեղծում բազմաթիվ ժողովուրդների՝ այդ թվում եւ մասնավորապես հայերի համար: Հայերը պատմության ընթացքում ենթարկվել են բազում արհավիրքների, սակայն ամենասարսափելին եղել է թուրքական «զուլումը», որի դեմ դարեր շարունակ կենաց ու մահու պայքար է մղել մեր ժողովուրդը: Ֆրանսիացի նշանավոր գրող, արվեստագետ ու քննադատ Քամիլ Մոքլերը գրում է. «Կարծում էինք, թե հայերն անպաշտպան զոհեր են, որոնք արժանի են մեր կարեկցությանը: Սխալ կարծիք: Նրանք առյուծներ են թուրք բորենիների դեմ.... Կարծում էինք, թե նրանք արժանի են միայն մեր արցունքներին, սակայն հիմա գիտենք, որ նրանք արժանի են նաեւ մեր հիացմունքին»:

Ովքե՞ր են թուրքերը, ու որտեղի՞ց նրանք հայտնվեցին Փոքր Ասիայում եւ Հայկական լեռնաշխարհում: Հարցին մանրամասն անդրադարձել է պատմաբան Մ. Արզումանյանն իր աշխատություններում:

Ամեն ժողովուրդ ունի իր անվանումը (էթնոնիմ), որը կապվում է նրա ծագման հետ: Առասպելական պատումի համաձայն՝ թուրքերը սերում են գորշ գայլից (բոզկուրթ): Թուրք զավթիչները գորշ գայլն են դարձրել իրենց խորհրդանիշը եւ իրականում հանդես եկել որպես գազանաբարո ջարդարարներ. դա է ապացուցում նրանց արյունոտ պատմությունը, այն, որ նրանք անհամար կորուստներ ու զրկանքներ են պատճառել բազմաթիվ ազգերի եւ խոչընդոտել պատմության առաջընթացին:

Թուրքերն սկզբում եւ երկար ժամանակ կոչվել են թյուրքեր, այժմ էլ նրանք այդպես են անվանում իրենց: Հին թյուրքերի մասին առաջին տեղեկությունները հաղորդում են Ե դարի չինական աղբյուրները: Չինական հիերոգլիֆներում նրանք անվանվում են «թյու-քյու», այսինքն՝ «թյուրք-յութ», «թյուրքեր», ընդ որում՝ հոգնակի *«յութ»* վերջածանցը մոնղոլական է. հին թուրքական լեզվում քաղաքական բոլոր եզրույթները ձեւակերպվել են մոնղոլական հոգնակի թվով: Թյուրքեր էին կոչվում Մոնղոլիայում եւ Ալթայում դեգերող մոնղոլատիպ թուրքալեզու ցեղերը: Թյուրք անունը գուցե եւ ունի իրանական ծագում: Ըստ «Ավեստայի» (հին իրանցիների նախաիսլամական՝ զրադաշտական սուրբ գիրքը)՝ այն քոչվոր սակերը (իրանական լեզվախմբին պատկանող ցեղեր), որոնք գնացին հեռավոր արեւելյան երկրներ, կոչվեցին «թուրեր՝ իրենց արագավազ ձիերով», իսկ նրանց զբաղեցրած տարածքն անվանվեց Թուրան:

Թյուրքերը հանդես են գալիս Կենտրոնական Ասիայում՝ սկզբնական շրջանում հոների միավորման մեջ: Զ դարում (552 թ.) հիմնադրում են իրենց պետականությունը՝ խաքանությունը (խաքան՝ իշխող, միապետ), որը հետո բաժանվում է երկու մասի՝ արեւելյան ու արեւմտյան, ապա Ը դարի կեսերին՝ բոլորովին կործանվում: Դրանից հետո թյուրք անվանումն այնքան էլ գործածական չի լինում. թուրքալեզու բազմաթիվ ցեղեր հանդես են գալիս սեփական անվանումներով՝ կիրգիզներ, ղփչաղներ, ույգուրներ, օղուզներ, թուրքմեններ, խակասներ եւ այլն: Նրանք զբաղեցնում են Միջին եւ Կենտրոնական Ասիան, որն իրանական աղբյուրներում կոչվում է Թուրքեստան՝ թյուրքերի երկիր: Ը դարում արաբները գրավում են դրա մեծ մասը, եւ արաբ պատմիչները թուրքալեզու ցեղերին անվանում են թուրքեր: Այդպես թուրք անվանումը տարածվում է բազմաթիվ ցեղերի վրա, որոնք նախկինում չէին մտել թյուրքական խաքանության կազմի մեջ, իսկ մի մասն էլ մոնղոլատիպ չէր եղել: Թուրքերն այնքան խառնածին են դառնում, որ գրեթե կորցնում են իրենց կերպարի մոնղոլատիպ գծերը, որոնք բնորոշ էին թյուրքերին:

Միջինասիական թուրքերն ընդունում են արաբական խալիֆաթի իշխանությունը, եւ այդ ժամանակ է նրանց շրջանում տարածվում իսլամը, որն անհանդուրժողականություն էր քարոզում ոչ մահմեդականների կամ «գյավուրների»՝ անհավատների նկատմամբ: Ժ դարում թուրքական օղուզ ցեղը Սիրդարյայի ստորին շրջաններում ստեղծում է իր պետությունը, որը կործանվում է ԺԱ դարակեսերին՝ արեւելքից արշավող ղփչաղների հարվածներից: Օղուզների մի մասը հեռանում է արեւմուտք՝ հարավռուսական տափաստաններ, իսկ մյուս մասը՝ սելջուկների գլխավորությամբ, շարժվում է դեպի Մերձավոր Արեւելք, հրով ու սրով, ավերածությամբ ու կոտորածով զավթում վիթխարի տարածք:

Սելջուկ-թուրքերն արշավում են նաեւ դեպի Հայաստան, որը մինչ այդ ազատագրվել էր արաբական լծից, Թ դարում ձեռք բերել անկախություն, եւ երկրում հաստատվել էր Բագրատունիների թագավորությունը: Հայաստանը թեւակոխել էր զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանը եւ շուրջ երկու դար ապրում էր տնտեսական ու մշակութային վերելք: Հզորացող Հայաստանն իր հերթին կարող էր դառնալ պատվար Արեւելքից եկող բարբարոս նվաճողների դեմ: Սակայն Բյուզանդական կայսրերը խիստ անհեռատես եւ անխոհեմ են գտնվում. նրանք ջլատող քաղաքականությամբ, դաժան հալածանքով ու կեղեքումով ուժասպառ են անում Հայոց երկիրը՝ չմտածելով արտաքին վտանգի դեմ ամուր պատնեշ ստեղծելու մասին: Այսպիսի իրավիճակը բարենպաստ էր սելջուկ-թուրքերի ավերիչ ասպատակությունների եւ զավթողական արշավանքների համար: Նշանավոր պատմաբան Նիկողայոս Ադոնցն իրավամբ շեշտում է, որ Բյուզանդիան «մատնեց Հայաստանը սելջուկյան հորդաների ձեռքը» եւ ճանապարհ հարթեց իր իսկ կործանման համար: Ֆրանսիացի պատմաբան Ժան Պիեռ Ալեմը եւս իր «Հայաստան» աշխատության մեջ, դատապարտելով Բյուզանդական կայսրության խիստ վնասակար քաղաքականությունը, գրել է. «Հայկական պատնեշի կործանումով թուրքերը սփռվեցին ամբողջ Փոքր Ասիայի տարածքով մեկ՝ զրկելով հունական կայսրությունն իր ամենահարուստ նահանգից ու կործանելով այն չորս դար հետո»:

Սելջուկները թյուրքական օղուզական ցեղի մի ճյուղն էին (քընըք) եւ այդպես էին կոչվում իրենց առաջնորդ Սելջուկի (Ժ–ԺԱ դդ.) անունով: Նրանք քոչվորներ էին, ապրում էին Սիրդարյայի միջին հոսանքում եւ զբաղվում անասնապահությամբ եւ ավարառու պատերազմներով: Սելջուկյան առաջնորդները ծառայում էին Թուրքեստանի խաքանի պալատում, բայց շուտով ընդհարվում են նրա հետ, հեռանում իրենց բնակավայրից եւ Ժ դարի 60-ական թվականներին հաստատվում Սամարղանդի եւ Բուխարայի շրջաններում: Այդ ժամանակ սելջուկներն ընդունում են մահմեդականություն, որը նրանց ավելի է մղում արյունալից պատերազմների՝ հատկապես «անհավատների», այսինքն՝ ոչ մահմեդականների դեմ: Կողոպտել, սպանել, ավերել՝ ահա քոչվոր սելջուկների եւ առհասարակ բարբարոս թուրքերի գործելակերպը:

Սելջուկները 1040 թ. Դենդանականի ճակատամարտում պարտության են մատնում ղազնեւներին՝ թյուրքական մեկ այլ ցեղի եւ գրավում Խորասանը, որից հետո նվաճում են Խորեզմը, Իրանը, Իրաքը, ապա արշավում դեպի Անդրկովկաս եւ Փոքր Ասիա,

ստեղծում իրենց մեծ պետությունը՝ սուլթանությունը:

Հայաստանի տարածքում սկզբում հայտնվում են թյուրքական հրոսակախմբեր, որոնք ասպատակում են մի շարք վայրեր, սպանում խաղաղ բնակիչներին եւ կողոպտում նրանց ունեցվածքը: Այդպես են վարվում, օրինակ, 1016 թվականին՝ ներխուժելով Վասպուրականի Արծրունյաց թագավորություն: Ժամանակի հայ պատմիչը՝ Արիստակես Լաստիվերցին, նրանց մասին գրում է. «Նրանք ունեն արյունարբու գազանների բնություն: Ահավոր կերպարանք ունեցող ցեղեր են, քանի որ նրանց դեմքերի տեսքերը զարհուրում է ու ահաբեկում դիտողներին: Նրանք վայրի գազանների նման բնակվում են լեռներում, դաշտերում եւ անապատներում եւ գիշակեր են գազանների պես: Չեն պատվում մեծամեծներին, չեն խնայում ծերունիներին, չեն խղճում երիտասարդներին ու մանուկներին: Չար եւ ժանտ ժողովուրդ են....»:

Նույնպիսի ասպատակություններ են տեղի ունենում հետագա տարիներին, երբ սելջուկ-թուրքերը հասնում են Նախճավան, Դվին, Նիգ եւ Ուրմիա: Այդտեղից բազմաքանակ թուրքմեններ (օղուզները ԺԱ դարից կոչվում էին նաեւ այդպես) 1042 թ. մտնում են Վասպուրական, ուր հանդիպում են հայերի դիմադրությանը, բայց ունենալով ուժերի գերակշռություն՝ կարողանում են ձեռք բերել մեծ ավար եւ ավերելով մի շարք քաղաքներ ու գյուղեր՝ վերադառնում են Ուրմիա: 1042–1043 թթ. օղուզներն ասպատակում են Արարատյան նահանգի Բջնի գավառը, բայց այդտեղ ստանում են ուժեղ հակահարված եւ նահանջում Ատրպատական: Այս արհավիրքների ժամանակ հայ ժողովուրդը ենթարկվում է կոտորածի, գերեվարության եւ ստրկավաճառության, կրում աննկարագրելի զրկանքներ: Բագրատունյաց թագավորությունը թուլանում է, իսկ բյուզանդական զորքերը կրում են առաջին պարտությունները սելջուկ-թուրքերից:

Հետագա տարիներին սեջուկները մի շարք արշավանքներ են կազմակերպում դեպի Հայաստան՝ պատճառելով անասելի վնասներ: 1047 թ. սելջուկյան 20 հազարանոց բանակը ներխուժում է Վասպուրական՝ մահ եւ ավերածություն սփռելով շուրջը: Դեպքերի ականատես Արիստակես Լաստիվերցին գրում է, որ նրանք՝ «....քաղցած ու անհագուրդ գայլերի նման, հարձակվեցին քրիստոնյաների վրա եւ հասնելով մինչեւ Բասեն գավառն ու Վաղարշավան կոչված մեծ դաստակերտը՝ սրով, հրով ու գերությամբ քանդելով ավերեցին քսանչորս գավառներ»: Ավելի կատաղի էր 1048–1049 թթ. արշավանքը (100 հազարանոց զորքով), որից տուժեցին հատկապես Բասենը, Կարինը, Տայքը, Տարոնը, իսկ Արծն վաճառաշահ հարուստ քաղաքը լիովին կողոպտվեց ու կործանվեց: Այս մասին Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Անհավատների զորքը հասավ հայոց հռչակավոր եւ մարդաշատ Արծն քաղաքը: Նրանք քաղաքը գտան անպարիսպ, տղամարդկանց ու կանանց անհամար բազմությամբ, հսկայական ոսկով եւ արծաթով լի: Քաղաքացիները, տեսնելով այլազգիների զորքը, մի մարդու պես դուրս եկան մարտի: Քաղաքի սահմանների վրա կատաղի եւ ահարկու ճակատամարտ եղավ.... Այլազգիները սրով հարձակվեցին քաղաքի վրա եւ ողջ քաղաքը սրի քաշեցին, կոտորեցին շուրջ 100 000 հոգու: Իսկ նրանց կողոպտած ոսկու, արծաթի ու դիպակների մասին պատմելն ավելորդ է, որովհետեւ հնարավոր չէ գրով արտահայտել»:

Բյուզանդիան Հայաստանի տարածքում եւս չի կարողանում սելջուկ-թուրքերի դեմ անհրաժեշտ դիմադրություն եւ հակահարված կազմակերպել, քանզի հայրենասեր հայոց զորքի փոխարեն օգտագործում էր օտար վարձկանների, որոնք շահագրգռված չէին կռվելու, իսկ մյուս կողմից՝ կայսրությունը բզկտվում էր ներքին հակասություններից ու գահակալական կռիվներից:

Այսպիսով՝ ինչպես նշել են ժամանակակիցները, Հայաստանը մնում է «անտերունչ եւ առանց պահապանի»: Չնայած դրան՝ հայերն ամենուր կազմակերպում են դիմադրություն: Երբ 1053 թ. թուրքմենական զորքը՝ Գթլմուշի գլխավորությամբ, հարձակվում է Կարսի վրա եւ չկարողանալով գրավել այն՝ նահանջում, Դվինի ճանապարհին Սուրմարի քաղաքի հայ բնակիչները, գինի հյուրասիրելով նրանց, արբեցնում եւ ջախջախում են:

Հաջորդ տարի մեծ զորքով, փղերով ու կառքերով Հայաստանի վրա է հարձակվում Տուղրիլ բեկը: Սելջուկ-թուրքերը կողոպտում եւ ավերում են Տարոնը, Անձիտ, Եկեղյաց գավառները, Տայքը եւ այլ շրջաններ, կոտորում եւ գերեվարում են մարդկանց, բայց եւ հանդիպում են Կարսի հայ ռազմիկների ու բնակչության ուժեղ դիմադրությանը, որի գործուն կազմակերպիչներից էր իշխան Թաթուլը: Նա մարտի ժամանակ մահացու վիրավորում է Տուղրիլի ազգական Արսուբան ամիրայի որդուն, եւ ինքն էլ գերի է ընկնում: Տուղրիլը Թաթուլին ասում է. «Եթե նա ապրի, քեզ կազատեմ, իսկ եթե մեռնի, կհրամայեմ, որ քեզ նրան մատաղ անեն»: Քաջ Թաթուլն աներկյուղ պատասխանում է. «Եթե իմ զարկածն է, չի ապրի»: Վիրավորը մահանում է, իսկ Թաթուլը՝ սպանվում. Տուղրիլը նրա աջ բազուկն ուղարկում է Արսուբանին՝ որպես մխիթարություն՝ նշելով, որ նրա որդին վատ բազկից չի մահացել: Տուղրիլի գազանությունների մասին գրել է նաեւ Միքայել Ասորի պատմիչը, որն իր «Ժամանակագրության» մեջ մասնավորապես նշում է, թե ինչպես են բեկի զորքերը հասել Հայաստան, կոտորել հայերին՝ չխնայելով անգամ մանուկներին, կողոպտել, բարբարոսաբար ավերել, այրել բակավայրերը, բազմաթիվ գերիներ տարել:

Շարունակելի

ԱՆՈՒՇ ԱՂԱՍԱՐՅԱՆ

Պատմագիտական նոր հետազոտությունների ընտրանի

➥ էջ 4

Ներկայացնելով ստեղծված ռազմաքաղաքական դրության իրական պատկերը՝ պատմաբանն ընդգծում է, որ այն միանգամայն նպաստավոր էր վրաց մենշեւիկների եւ կովկասյան թաթարների (մուսաֆաթականների) համար, եւ նրանք, գործելով միասնաբար, փորձեցին առավելագույնս օգտվել Հայաստանի համար ծանր կացությունից:

Ակադեմիկոս Ա. Մելքոնյանը գիտական հմտությամբ եւ անաչառությամբ բացում է բազմաթիվ փակագծեր 1918–1920 թթ. ընթացքում հայ-վրացական երկկողմ, նաեւ եռակողմ՝ հայ-վրաց-թուրքական հարաբերություններում տեղի ունեցած կնճռոտ, բարդ ու ցավալի իրադարձությունների գնահատման եւ լուսաբանման համար: Ավելին՝ բացահայտվում եւ մերկացվում են լայն հանրությանը դեռեւս անծանոթ բազմաթիվ այլ փաստեր, որոնք լույս են սփռում այդ փուլում հայ-վրացական հարաբերություններում անգլիացիների ունեցած միակողմանի՝ զուտ վրացամետ դիրքորոշման վերաբերյալ:

Ա. Մելքոնյանի սույն ժողովածուում զետեղված կարեւոր ուսումնասիրությունների շարքում անպայմանորեն դիտարկելի է «Արցախը հայոց պետականության պատմության հոլովույթում» ծավալուն հետազոտությունը (էջ 337–360): Դրանում փաստարկվում է, որ մեզանում թյուր պատկերացումներ են ձեւավորվել «անկախություն» երեւույթի ըմբռնման եւ ընկալման շուրջ: Պատմաբանների մի մասը կարծում է, որ պետականությանը բնորոշ բոլոր հատկանիշներով (տարածք, բնակչություն, կառավարման համակարգ, զինական ուժեր, միջազգային ճանաչում եւ այլն) օժտված լինելու դեպքում լոկ կարելի է արձանագրել տվյալ պետականության գոյությունը:

Ա. Մելքոնյանը խորապես համոզված պնդում է, որ իրականում վերոնշյալ հատկանիշների մի մասի գոյությունն իսկ բավարար է այն որպես պետական կազմավորում նկատելու եւ ընդունելու համար. «Պարտադիր չէ պետականությունն ընդգրկի տվյալ էթնոսի ամբողջ պատմական արեալը, բացարձակ իմաստով անկախ լինի, ունենա համընդհանուր միջազգային ճանաչում, կառավարման միապետական կամ հանրապետական կարգավիճակ եւ այլն: Շատ կարեւոր է հասկանալ, որ Հայկական լեռնաշխարհում համահայկական պետականության բացակայությունը դեռ չի նշանակում առհասարակ պետականության բացակայություն: Այն, գոյություն ունենալով պատմական Հայաստանի մի հատվածում, որպես կանոն, պատմաաշխարհագրական նպաստավոր պայմաններ ունեցող տարածաշրջաններում ունեցել է պետականության տարբեր դրսեւորումներ» (էջ 337): Հավանաբար լիովին պետք է համաձայնել պատմաբանի սույն դիրքորոշման հետ, որովհետեւ հակառակ դեպքում մենք չափազանց մեծացնում ու լայնացնում ենք Հայկական լեռնաշխարհում հայոց պետականության բացակայության ժամանակաշրջանները:

Սույն մոտեցման կամ սկզբունքի կիրառման դեպքում մենք դիտարկում ենք հայոց պետականության գրեթե հարատեւ ներկայությունը մեր լեռնաշխարհի տարածքում, իհարկե, ոչ որպես միասնական ու կենտրոնացված համահայկական պետականության:

Այսպես, ըստ հետազոտողի, միջնադարյան մեր պետականության շրջանը ներառում է Դ դարավերջից մինչեւ ԺԷ դարի կեսերը: Առաջին փուլը (վաղմիջնադարյան պետականություն) սկսվում է Հայաստանի առաջին բաժանումով եւ ավարտվում Թ դարի երկրորդ կեսին՝ Բագրատունիների թագավորության ստեղծումով: Թեեւ 387 թ. Մեծ Հայքը բաժանվում է Հռոմի եւ Պարսկաստանի միջեւ, իսկ 428 թ. անկման է հասնում Արշակունիների թագավորությունը, այնուամենայնիվ վերջնական կորստյան չի մատնվում հայոց պետականությունը, այլ ձեռք է բերում նոր դրսեւորումներ՝ Արեւելյան Հայաստանում՝ մարզպանական, իսկ Արեւմտյան Հայաստանում՝ սատրապական համակարգերով, որոնց հիմքում էլ ընկած է նախարարական համակարգը: Բազմաթիվ հիմնավորումներում ապացուցվում է այն ճշմարտությունը, որ հայոց նախարարական համակարգն իր կայունությամբ եւ ճկունությամբ միջնադարի մի երկար ու ձիգ ժամանակաշրջանում հանդիսացել է հայոց պետականության հենքն ու հենարանը:

480-ական թվականներին՝ Նվարսակի հաշտության կնքումից հետո, հայոց պետականությունը «....ինքնավար տարբերակով վերականգնվեց ինչպես Արեւելյան Հայաստանի կենտրոնական հատվածում՝ Արարատյան երկրում, այնպես էլ հայոց Արեւելից կողմերում՝ Արցախում՝ Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ» (էջ 340): Եվ հետագա դարերում պահպանվեց ու պաշտպանվեց պետականությունն Արցախում, ու այդ երկրամասը դարձավ հայոց հավաքական պետականության պահպանման կենտրոններից մեկը: Բազմաթիվ էական փաստարկումներով ընդգծվում ու շեշտադրվում է այդ միտքը, որ երկարատեւ մի ժամանակահատվածում Արցախում պետականության յուրօրինակ դրսեւորումներ եղան հայկական սղնախներն ու մելիքությունները:

Եվ պատահական չէ, որ կիսանկախ, կիսահինքնավար Արցախի դերը խիստ կարեւորվեց ԺԸ դարի առաջին կեսին ու նույն դարի երկրորդ կեսին հայ ազգային-ազատագրական շարժման առաջադրած նպատակներում եւ ծրագրերում:

Ա. Մելքոնյանը մանրակրկիտ քննության եւ վերլուծության է ենթարկում հայոց պետականության դրսեւորման ձեւերն ու դրվագները Արեւմտյան Հայաստանի տարածքում եւ Արեւելյան Հայաստանում մինչեւ Ի դարն ընկած ժամանակամիջոցում: Անդրադառնալով Ի դարում տեղի ունեցած իրադարձություններին՝ ընդգծում եւ արձանագրում է հետեւյալը. «1918 թ. մայիսի 28-ով սկսվող Հայաստանի Հանրապետության (1918–1920) պատմության փուլը նշանավորվում է ոչ միայն անկախության վերականգնումով, այլ նաեւ իր վարչական կառուցվածքով ժողովրդավարական՝ խորհրդարանական հանրապետության ստեղծումով: Ընդամենը երկուսուկես տարիների ընթացքում Առաջին Հանրապետությունը ձեռք է բերում անկախ պետականությանը բնորոշ բոլոր հատկանիշները՝ տարածք, իշխանության մարմիններ, բանակ, միջազգային ճանաչում» (էջ 356–357):

Ամփոփելով՝ շեշտենք, որ եւ վերոնշյալ, եւ հայ պատմագիտության առջեւ ծառացած բազմաթիվ այլ հրատապ հիմնահարցեր են քննվում սույն ժողովածուի էջերում:

Ակադեմիկոս գիտնականի խստապահանջությամբ, հնարավոր անաչառությամբ եւ համբերատար բարեխղճությամբ քննության են առնված, վերլուծության ենթարկված ու հաճախ նոր թարմությամբ եւ բովանդակությամբ իմաստավորված այդ հիմնահարցերը, առաջադրված են նոր չափանիշներ ու սկզբունքներ՝ կնճռոտ ու վիճահարույց տեսությունների եւ վարկածների պատմագիտական քննարկման համար:

Ա. Մելքոնյանի այս ծավալուն հատորն իր հրատապությամբ եւ նորովի իմաստավորված արդիականությամբ, գիտատեսական խորքով եւ խորությամբ, անշուշտ, մնայուն տեղ է նվաճելու հայ պատմագիտական ու հասարակական-քաղաքական մտքի անդաստանում:

Այն հիմնավորապես օգտակար է լինելու թե՛ նեղ մասնագետներին, թե՛ ընթերցողներին՝ իրենց հետաքրքրող հարցերին պարզ եւ հստակ հիմնավորումներ ու բացատրություններ գտնելու եւ ճշմարտացի եզրահանգումների հասնելու առումով:



Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Հայ դպրության հիմնադիրը

➥ էջ 2, 5

Մաշտոցը հաճախ է վկայաբերում աստվածաշնչյան կերպարների, որոնք խոստովանող-ապաշխարողի ակնառու եւ դասական օրինակներ են (Հովնան, մաքսավոր) մատենագրական նույնաբնույթ ժողովածուներում եւ այլ շարականներում: Մեղանչողները հաճախ ներկայացվում են բուսական անվանումներով (անբարունակ որթ, ոստաքանց արմավենի, պտղակորույս ձիթենի)՝ պատկերային ընդարձակ դաշտ ստեղծելով.

Զանապական զհոգեւոր զգանձն
Յապականացու կենցաղս ծախեցի,
Այլ առ քեզ միայն պաղատիմ,
Բարերար Փրկիչ,
Խնայեա՛ ի մեղուցեալ ծառայս:

Զցանկ հոգւոյ իմոյ քակտեցի
Եւ եղէ անբարունակ որթ,
Այլ առ քեզ միայն պաղատիմ,
Բարերար Փրկիչ,
Խնայեա՛ ի մեղուցեալ ծառայս:

Ոստաքանց եղէ ես
Որպէս զարմաւենի,
Պտղակորոյս՝ որպէս ձիթենի.
Այլ առ անյիշաչար եւ անոխակալ Փրկիչ,
Խնայեա՛ ի մեղուցեալ ծառայս:

Հավելենք, որ եթե անգամ Մեսրոպ Մաշտոցը հոգեւոր երգերի հեղինակ չլիներ, դարձյալ անգնահատելի կլիներ հայ երաժշտությանը նրա մատուցած նշանակալի ծառայությունը: Ինչպես արդեն գիտենք, Մաշտոցի ստեղծած այբուբենը երգերի խոսքերը գրի առնելու անփոխարինելի միջոց դարձավ. գրավոր խոսքի շնորհիվ հարատեւեցին նաեւ երգի մեղեդին, ծավալը, կառուցվածքը եւ կշռույթը (ռիթմ): Մաշտոցը, ամենայն հավանականությամբ, մասնակցել է նաեւ հայոց ձայնեղանակների կարգավորմանը՝ դրանք ուսուցանելով դպրոցում (տես *Ն. Թահմիզյան,* Մեսրոպ Մաշտոցն ու հայոց հոգեւոր երգարվեստը, Երեւան, 1964, էջ 205):

Օֆելյա ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Արփինե Չանթիկյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am

web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan

Ստոր. տպագր. 9.02.2023 թ.
Տպաքանակը՝ 1225